



ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Չ Ե Կ ՈՒ Յ Ց

ԲԻԶՆԵՍ - ՌԵԳԻՍՏՐԻ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ՍԵՓԱՆԱԿԵՐՏ

Թողարկման պատասխանատուներ՝

ԼՂՀ վիճակագրության
պետական խորհրդի անդամ
Է. Բաբուրյան

ԼՂՀ ԱՎԾ նախագահի տեղակալ
Կ. Առուշանյան

ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի
ՆԱԾՎ բաժնի պետ
Լ.Սողոմոնյան

ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի
ՀՍ բաժնի պետ
Ի. Մելքունյան

Հեռախոս՝ 94-33-72

Էլեկտրոնային փոստ՝ artsakhstat@karabakh.net

Ինտերնետի էջ www.stat-nkr.am

Թուղթ օֆսեթ 1: Չափերը՝ 21x29,7: Տպաքանակը՝ 60 օրինակ:
Հանձնված է տպագրության 2012թ. մայիսին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
2. ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.....	5
3. ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	5
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	7
5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	8
6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	10
6.1. Տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ակտիվությունը և չափերը.....	10
6.2. Կազմակերպությունների կազմակերպական-իրավական ձևերն ու հիմնադիրները	18
6.3. Տնտեսավարող սուբյեկտների բաշխումն ըստ գործունեության տեսակների	22
6.4. Տնտեսավարող սուբյեկտների բաշխումն ըստ հասույթի	25
6.5. Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները.....	31
6.6. Կազմակերպությունների բաշխումն ըստ մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների	34
6.7. Կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվությունը.....	35
6.8. Տնտեսավարող սուբյեկտների ապագա տնտեսական ծրագրերը.....	37
6.9. Տնտեսական գործունեության զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրները.....	41
6.10 Տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները այլ մարմինների կամ երրորդ անձանց տրամադրումը.....	43
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	45
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ.....	49
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ.....	81
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ (ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ) ՌԵԳԻՍՏՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ.....	101

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2012 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի համաձայն վարվող բիզնես ռեգիստրի տվյալների բազայի արդիականացման, համալրման և ամբողջականացման նպատակով 2012թ. հունվար-մարտ ամիսներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից անց է կացվել իրավաբանական անձանց (կազմակերպությունների) և անհատ ձեռնարկատերերի հետազոտություն, որի նպատակն էր տեղեկատվություն ստանալ հանրապետությունում գործող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գործունեության տեսակների (հիմնական և երկրորդային), աշխատողների թվաքանակի, հիմնադիրների և գործադիր մարմնի ղեկավարների, գրանցման և գործունեության հասցեների, ինչպես նաև գործունեության արդյունքներով ձևավորված հասույթի, աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության բիզնես ռեգիստրի վարման համար անհրաժեշտ այլ ցուցանիշների վերաբերյալ: Հետազոտությունը նպատակ ուներ նաև բացահայտելու հանրապետությունում հաշվառված տնտեսավարող սուբյեկտների գործարար ակտիվությունը, բիզնեսի ծավալմանն ու զարգացմանը խոչընդոտող խնդիրները: Հետազոտությունը հնարավորություն է տվել բացահայտելու տնտեսական գործունեություն իրականացնողների զենդեբային բնութագիրը: Հետազոտությամբ ընդգրկվել են 3173 կազմակերպություն և 5431 անհատ ձեռնարկատեր:

Հետազոտությունն իրականացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2010թ դեկտեմբերի 13-ի N22-Ն և N23-Ն որոշումներով հաստատված անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթերի միջոցով (հավելված 3):

Հարցաթերթում ներառված ցուցանիշները հնարավորություն են տվել համալրել և արդիականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության բիզնես ռեգիստրում ընդգրկված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունները:

Ձեկույցը նախատեսված է սպառողների լայն շրջանակի համար, կարող է օգտակար լինել գործարարության աջակցության ծրագրեր կազմողների, բնագավառում քաղաքականություն մշակողների, տնտեսությունում ներդրումներ իրականացնելու մտադրություն ունեցողների, գործարարների, ինչպես նաև ոլորտում ուսումնասիրություններ իրականացնողների համար:

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից լրացված հարցաթերթերի վրա է խարսխված սույն զեկույցը և ողջունում նրանց, ինչպես նաև զեկույցի բոլոր օգտագործողների արձագանքներն ու առաջարկությունները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
չնշին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	X
Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:	

2. ԲԻԶՆԵՍ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ազատական տնտեսակարգի ձևավորմանն ու արմատավորմանը միտված բարեփոխումների պատճառահետևանքային կապերի տրամաբանությամբ պայմանավորված, էական փոփոխությունների ենթարկվեց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների կազմն ու կառուցվածքը, հանգեցնելով ինչպես դրանց քանակի շարունակական ընդլայնմանը, այնպես էլ իրականացվող գործունեության տեսակների բազմազանությանը: Փոփոխությունների ենթարկվեցին նաև անհատ ձեռնարկատերերի հիմնական բնութագրիչները՝ նրանց վերապահվեց վարձու աշխատող ունենալու իրավասություն և այլն: Այդ համատեքստում, վիճակագրական տեղեկատվության ամբողջականության ու արժանահավատության տեսանկյունով, թերևս, առանձնակի կարևորություն է ստանում պաշտոնական վիճակագրությունում ընտրանքային դիտարկման եղանակների ներդրումն ու կիրառումը, ինչն էլ իր հերթին խարսխվում և պայմանավորված է հնարավորինս ամբողջական, արդիական ու համընդգրկուն վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի առկայության հանգամանքով: Լայն տարածում ունենալով միջազգային վիճակագրական պրակտիկայում, բիզնես ռեգիստրները խարսխվում են միջազգային չափանիշների և դրա հենքի վրա մշակված ու տեղական առանձնահատկությունները բնութագրող վիճակագրության միասնական մեթոդաբանության վրա և ուղղված են վիճակագրական դիտարկումների համար անհրաժեշտ ընտրանքի իրականացման, դրանց արդյունքների տարածման, ինչպես նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ժողովրդագրական շարժի ուսումնասիրության (ստեղծում, գործունեության դադարեցում, վերակազմակերպում, գործունեության տեսակի փոփոխություն և այլն), տնտեսական ցուցանիշների հավաքագրման և այլ վիճակագրական խնդիրների իրագործման ապահովմանը:

Ելնելով վերոնշյալ հիմնական խնդիրներից, ընդհանուր առմամբ, բիզնես ռեգիստրի վարման նպատակով հավաքագրվող ցուցանիշների համակազմն, ըստ բնույթի (նպատակի) տարանջատվում է հետևյալ չորս հիմնական խմբերի.

- նույնականացման ցուցանիշներ (օրինակ՝ իրավաբանական անձանց անվանումը և անհատ ձեռնարկատերերի անունն ու ազգանունը, գտնվելու վայրը և գործունեության իրականացման վայրը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը),
- ընտրանքի ցուցանիշներ (օրինակ՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող հիմնական և երկրորդային գործունեությունները, չափը (ըստ աշխատողների թվաքանակի, հասույթի կամ այլ չափորոշիչի), շրջանը),
- ժողովրդագրական ցուցանիշներ (օրինակ՝ ստեղծման ամսաթիվը, լուծարման կամ վերագրանցման ամսաթիվը),
- այլ ցուցանիշներ:

3. ԲԻԶՆԵՍ-ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բիզնես ռեգիստրների վարումը հարկ է դիտարկել ոչ թե որպես առանձին գործառույթ, այլ որպես վիճակագրական և վարչական ռեգիստրների համակարգման միասնական գործիք, ինչը հիմնավորված է նաև ՍԱԿ-ի Եվրոպական տնտեսական

հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում (ԺՆՆ, 15.04.1992թ.) և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից (14.04.1994թ) ընդունված պաշտոնական վիճակագրության հիմնարար 10 սկզբունքներից հետևյալ երկու սկզբունքների մեկնաբանությունների համատեքստում (որոնք էլ, ըստ էության, հստակ նախանշում են վարչական տեղեկատվական ռեգիստրներից վիճակագրական ռեգիստրներ տեղեկատվության միակողմանի փոխանցման բնույթը)։

Սկզբունք 5. Արդյունավետություն.

Վիճակագրական նպատակների համար տվյալները կարող են ներգրավվել բոլոր տեսակի աղբյուրներից՝ լինեն դրանք վիճակագրական հետազոտություններ կամ վարչական փաստաթղթեր։ Վիճակագրական գերատեսչությունները պետք է ինքնուրույնաբար ընտրեն աղբյուրը, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են որակը, ժամանակայնությունը, ծախսերը և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը։

Սկզբունք 6 Գաղտնիություն.

Վիճակագրական գերատեսչությունների կողմից վիճակագրական տեղեկատվության կազմման համար վիճակագրական կոնկրետ միավորների վերաբերյալ հավաքագրվող տվյալները, անկախ նրանից, դիտարկվող միավորը ֆիզիկական թե իրավաբանական անձ է, պետք է դիտարկվեն որպես խիստ կոնֆիդենցիալ և օգտագործվեն բացառապես վիճակագրական նպատակներով։

Բիզնես ռեգիստրի, որպես առանցքային նշանակության վիճակագրական գործիքի, վերաբերյալ առանձին դրույթ, ի թիվս ընդհանրական այլ միջոցառումների, ամրագրված է նաև 2006թ. նոյեմբերի 14-ին Բրյուսելում ստորագրված «Եվրոպական Միություն-Հայաստան գործողությունների ծրագրի»՝ վիճակագրությանը վերաբերող համապատասխան մասում՝ «բարելավել բիզնես ռեգիստրի որակը և ծածկույթը» ձևակերպմամբ։

Պետական վիճակագրությունում միջազգայնորեն ընդունված՝ վերը նշված և մյուս սկզբունքների իրագործման նկատառումներով պայմանավորված էլ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2002թ. ապրիլի 30-ին ընդունված «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածով ամրագրվեց համապատասխան դրույթ, համաձայն որի «Ծառայությունը ստեղծում և վարում է բիզնես (ձեռնարկատիրական) - ռեգիստր։

Բիզնես-ռեգիստրի ստեղծումը և վարումն իրականացվում է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի հիման վրա։ Բիզնես-ռեգիստրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց իրական գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի և Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ այլ ցուցանիշների մասին մշտական արդիականացման ենթակա տվյալների բազա է։ »։

Մյուս կողմից, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից բիզնես ռեգիստրի վարմանն առնչվող դրույթներ ամրագրվել են նաև պետական վիճակագրական աշխատանքների՝ ինչպես նախորդ երեք, այնպես էլ 2012-2014 թվականների եռամյա ծրագրերում, համաձայն որի նախատեսված է,

-վարչական ռեգիստրների(մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստր, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն և այլն) կողմից վարվող տվյալների բազաների հիման վրա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով բիզնես ռեգիստրի բազայի ամբողջականացման ասպահովում և դրանում ներառված ցուցանիշների պարբերաբար

արդիականացում՝ համաձայն միջազգային ընդունված չափորոշիչների.

-բիզնես ռեզիստրի բազայի ծրագրային ապահովման շարունակական կատարելագործում՝ ուղղված պետական վիճակագրության ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրարկման ընդլայնմանը.

-բիզնես ռեզիստրի բազայում առկա ցուցանիշների որակի բարձրացման նպատակով ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքագրվող տեղեկատվության մշակման գործիքների կատարելագործում:

Այս առումով հարկ է նշել, որ սույն հետազոտության իրականացումն ուղղորդված է նաև պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերի համապատասխան դրույթների իրագործման ապահովմանը:

Բիզնես ռեզիստրի վարման բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի առումով, «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի ընդունմանը հաջորդած Ժամանակահատվածում, ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվել և գործողության մեջ են դրվել հետևյալ նորմատիվ-իրավական ակտերը՝

- ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 17-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի վարման կարգը հաստատելու մասին» N6 որոշումը: Որոշմամբ հաստատված կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բիզնես ռեզիստրի վարման, պահվող տեղեկությունների հավաքագրման, արդիականացման, ինչպես նաև օգտագործման կարգն ու պայմանները,
- վարման համար անհրաժեշտ տվյալների ներկայացման հարցաթերթերի նոր ձևերը և դրանց լրացման հրահանգները:

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սույն հետազոտության հիմնական նպատակն է արդիականացնել, համարել և ամբողջականացնել բիզնես ռեզիստրի վարման համար անհրաժեշտ տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալները:

- Հետազոտության նպատակներն ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.
- համարել ԼՂՀ ԱՎԾ բիզնես ռեզիստրի տվյալների բազան և ձևավորել նախադրյալներ դրա պարբերական արդիականացման համար,
- արդիականացնել բիզնես ռեզիստրում ներառված տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները և ձևավորել մեխանիզմներ դրա պարբերական իրացման համար,
- ուսումնասիրելով տնտեսավարող սուբյեկտների գործունեության (հիմնական և երկրորդային) տեսակները, աշխատողների թվաքանակը և այլն՝ կատարել համապատասխան դասակարգումներ,
- ապահովել վիճակագրությունում միջազգային ստանդարտների և դասակարգումների կիրառությունը,
- ձևավորել նախադրյալներ պետական վիճակագրությունում ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրարկումն ընդլայնելու համար,
- ուսումնասիրել տնտեսավարող սուբյեկտների ժողովրդագրությունը,
- ներկայացնել տնտեսական գործունեության բնագավառում գենդերային հիմնահարցերը,

- բացահայտել տնտեսավարող սուբյեկտների գործարար ակտիվությանը խոչընդոտող առաջնահերթ խնդիրները:

Նշված համատեքստում, սույն հետազոտության անցկացման անհրաժեշտությունը հիմնավորվել է նաև հետևյալ փաստարկներով.

- գերփոքր, փոքր և միջին բիզնեսի զգալի շարժով, հիմնականում ի հաշիվ դրանց ստեղծման, գործունեության տեսակների փոփոխման կամ գործունեության դադարեցման արագ տեմպերի, ինչը նվազեցնում է ժողովրդագրական փոփոխություններին հետևելու հնարավորությունը,
- վարչական ռեգիստրներում առկա՝ տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների ոչ ամբողջականությամբ, մասնավորապես՝ գործունեության տեսակների, աշխատողների թվաքանակի, գործունեության իրականացման վայրի և այլ ցուցանիշների բացակայության հանգամանքով,
- տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ SԳ-SԴ (Եվրամիության համանուն՝ NACE դասակարգչի հիման վրա) ներդրման հետ կապված ծածկագրման և վերածածկագրման աշխատանքներով:

Ամփոփելով հարկ է նշել, որ սույն հետազոտության իրականացման համար կիրառվել են վիճակագրական այնպիսի ստանդարտ գործիքներ, ինչպիսիք են դասակարգիչները, ծրագրային ապահովումը և այլն:

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԼՂՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանում առկա տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների բազան և ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում առկա՝ պետական վիճակագրական դիտարկումներում ընդգրկված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալների բազաները հիմք են հանդիսացել հետազոտության կազմակերպման համար:

Հետազոտության տիրույթում ներառվել են 2011թ պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանում առկա տնտեսավարող սուբյեկտները՝ անկախ նրանց տնտեսական ակտիվությունից(այդ թվում 2011թ ընթացքում լուծարվածները):

2012թ հունվարի 1-ի դրությամբ, ըստ ԼՂՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի բաժնի տվյալների, առևտրային իրավաբանական անձանց թվաքանակը կազմել է 3049 միավոր, անհատ ձեռնարկատերերի թվաքանակը՝ 5392 միավոր: Տվյալների բազաների ճշգրտման արդյունքում սույն հետազոտությամբ ընդգրկվել են 3173 կազմակերպություն և 5431 անհատ ձեռնարկատերեր:

Հետազոտությամբ ընդգրկված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի շրջանային բաշխումն արտացոլված է ստորև բերված աղյուսակ 1-ում:

Հետազոտությանը ընդգրկված իրավաբանական անձանց և անհատ ձեռարկատերերի
բաշխումն ըստ շրջանների

Շրջան	Ընդամենը		իրավաբանական անձինք		անհատ ձեռնարկատերեր	
	քանակը	տոկոսով՝ ընդամենի նկատմամբ	քանակը	տոկոսով՝ ընդամենի նկատմամբ	քանակը	տոկոսով՝ ընդամենի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ	8604	100.0	3173	100.0	5431	100.0
ք.Ստեփանակերտ	4763	55.3	2062	65.0	2701	49.7
Ասկերանի	689	8.0	169	5.3	520	9.6
Հաղրուքի	496	5.8	148	4.7	348	6.4
Մարտակերտի	811	9.4	192	6.1	619	11.4
Մարտունու	1007	11.7	286	9.0	721	13.3
Շահումյանի	111	1.3	18	0.6	93	1.7
Շուշիի	273	3.2	122	3.8	151	2.8
Քաշաթաղի	454	5.3	176	5.5	278	5.1

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված սույն հետազոտությունը հանդիսանում է բիզնես ռեգիստրի տվյալների բազայի ձևավորման և արդիականացման ուղղակի աղբյուրներից մեկը:

Տնտեսավարող սուբյեկտներից՝ բիզնես ռեգիստրի վարման համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների (այսուհետ՝ հարցազրուցավարների) կողմից, հարցումների միջոցով:

Մինչ այդ, հետազոտության նախապատրաստման և անցկացման նպատակով, իրականացվել են հարցազրուցավարների հրահանգավորման աշխատանքներ, նրանց են հանձնվել դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, լրացման հրահանգները, համապատասխան կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցուցակները, ինչպես նաև, հարցաթերթում գործունեության տեսակների գրանցման (ծածկագրման) համար անհրաժեշտ՝ ՏԳՏԴ մեկական օրինակները:

Հրահանգավորման ընթացքում, հարցազրուցավարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթում ներառված ցուցանիշների լրացման, ինչպես նաև ՏԳՏԴ կիրառման վերաբերյալ: Մանրամասն պարզաբանումներ են տրվել նաև, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գործունեություն չիրականացնելու, հասցեի անհամապատասխանության և այլ դեպքերի ժամանակ հարցաթերթերի լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու նպատակով ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ հետազոտության անհրաժեշտության և դրա նպատակների պարզաբանման, հարցաթերթերի լրացման առումով հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ակտիվության բարձրացման և վերջիններիս կողմից գործուն օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ամփոփումը՝ ըստ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գրանցման վայրերի: Հարցազրուցավարների կողմից լրացված հարցաթերթերը թվաբանական և տրամաբանական ստուգման ենթարկվելուց հետո

ենթարկվել են համակարգչային մշակման:

Հետազոտության արդյունքների մուտքագրման նպատակով կազմվել է համապատասխան ծրագիր, որի հիման վրա և իրականացվել է հարցաթերթերի տվյալների մուտքագրումը:

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

6.1. Տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ակտիվությունը և չափերը

6.1.1. Կազմակերպությունների տնտեսական ակտիվությունը և չափերը


Իրավաբանական անձանց բիզնես ռեգիստրի հետազոտությունն ընդգրկել է հանրապետության տարածքում գրանցված 3173 կազմակերպություն: Նշված կազմակերպություններից հարցման ժամանակաընթացքում գործել են 963-ը կամ ընդամենի 30.4 տոկոսը, չեն գործել 1717-ը կամ ընդամենի 54.1 տոկոսը, իսկ 493-ը (15.5 տոկոսը) չեն հայտնաբերվել (հասցեների անհամապատասխանություն, հանրապետությունից բացակայություն և այլն) (հավելված 1, աղյուսակներ 1, 2, 3):

Ստեփանակերտ քաղաքին բաժին է ընկնում հանրապետությունում գրանցված կազմակերպությունների 65.0 տոկոսը, գործող կազմակերպությունների 71.0 տոկոսը, չգործող կազմակերպությունների 57.0 տոկոսը և չհայտնաբերվածների 81.1 տոկոսը:

Չնայած հանրապետությունում գրանցված կազմակերպությունների 9.0 տոկոսը հաշվառված է Մարտունու շրջանում, գործող կազմակերպությունների միայն 6.5 տոկոսն է հաշվառված շրջանում, այնինչ չգործողների բաժինը կազմել է 12.7 տոկոս: Բավական բարձր է նաև Քաշաթաղի շրջանում հաշվառված, սակայն չհայտնաբերված տնտեսավարող սուբյեկտների տեսակարար կշիռը՝ 14.8 տոկոս:

Հետազոտված կազմակերպությունների տնտեսական ակտիվությունը և դրանց չհայտնաբերվելու հանգամանքն արտացոլված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Կազմակերպությունների բաշխումն ըստ գործելու, չգործելու և չհայտնաբերվելու հատկանիշների, %



Ըստ շրջանային բաշխվածության դիտարկելու պարագայում, գործող կազմակերպությունների տեսակարար կշիռն առավել բարձր է եղել Ասկերանի շրջանում, Ստեփանակերտում, Հադրութի և Մարտակերտի շրջաններում, որտեղ այն կազմել է գրանցված կազմակերպությունների, համապատասխանաբար, 37.3 տոկոսը, 33.2 տոկոսը, 29.0 տոկոսը և 28.6տոկոսը, ցածր է եղել Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում՝ համապատասխանաբար 13.1 տոկոս և 16.7 տոկոս: Չգործող կազմակերպությունների առումով, առավել բարձր տեսակարար կշռով առանձնացել են Շահումյանի, Մարտունու, Հադրութի շրջանները՝ համապատասխանաբար 83.3 տոկոս, 76.6 տոկոս և 71.0 տոկոս, իսկ առավել ցածր տեսակարար կշռով՝ Քաշաթաղի շրջանը՝ 45.4 տոկոս:

Չհայտնաբերված կազմակերպությունների բարձր տեսակարար կշռով աչքի է ընկել

Քաշաթաղի շրջանը շրջանում հաշվառված կազմակերպությունների 41.5 տոկոսը հետազոտության ընթացքում հարցազրուցավարների կողմից չեն հայտնաբերվել:


Հետազոտության հարցաթերթը հնարավորություն է ընձեռել նաև տեղեկատվություն ստանալ գործող կազմակերպությունների պետական գրանցման վայրի(հասցեի), գործունեության իրականացման փաստացի վայրի (հասցեի) և դրանց տարբերությունների վերաբերյալ: Ուշագրավ է, որ համաձայն հետազոտության արդյունքների, գործող կազմակերպությունների 30.7տոկոսը(կամ 296կազմակերպություններ) գործունեություն է իրականացրել գրանցման վայրից տարբերվող հասցեում: Ընդ որում, նշված քանակի կազմակերպություններից 249-ը որպես գործունեության իրականացման վայր է նշել նույն շրջանի (քաղաքի) մեկ այլ հասցեն, 36-ը՝ հանրապետության այլ շրջանը (քաղաքը), իսկ 11-ը՝ հանրապետությունից դուրս(հավելված 1, աղյուսակներ 4.5):

Կազմակերպությունների պետական գրանցման և փաստացի գործունեության իրականացման վայրերի տարբերություններ են արձանագրվել բոլոր շրջաններում(բացի Շահումյանի շրջանից), իսկ հանրապետությունից դուրս այլ վայրում՝ Ստեփանակերտում և Հաղարթի շրջանում:

Գիտարկելով կազմակերպությունները ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի*, հետազոտությամբ պարզվել է, որ գերփոքր են եղել գործող կազմակերպությունների 56.4տոկոսը, փոքր՝ 31.0տոկոսը: Միջին և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 4.9 տոկոս և 7.7տոկոս: Ընդ որում, խոշոր կազմակերպությունները չեն եղել ձկնորսության և ձկնաբուծության և ֆինանսական գործունեության տեսակներով զբաղվող կազմակերպությունների համակցություններում(հավելված 1, աղյուսակ 6):

Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի



Գյուղատնտեսությունը, որսորդությունը և անտառային տնտեսությունը ներկայացնող կազմակերպությունների 47.6տոկոսը փոքր և 42.8տոկոսը գերփոքր կազմակերպություններ են, որոնք կազմել են փոքր և գերփոքր կազմակերպությունների ընդամենի, համապատասխանաբար, 3.3 տոկոսը և 1.6 տոկոսը:

Հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող կազմակերպությունների

* Հիմք են ընդունվել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքի հոդված 2-ով գործունեության տարբեր տեսակների համար սահմանված աշխատողների թվաքանակի չափորոշիչները, համաձայն որոնց. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝ գերփոքր (որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում 5 մարդը), փոքր (որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝ արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում՝ 50, շինարարության և էներգետիկայի բնագավառում՝ 25, գիտության և կրթության բնագավառում՝ 25, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում՝ 15 մարդը), միջին (որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝ արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում՝ 100, շինարարության և էներգետիկայի բնագավառում՝ 50, գիտության և կրթության բնագավառում՝ 50, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում՝ 30 մարդը)

71.4 տոկոսը գերփոքր, 14.3-ական տոկոսը փոքր և խոշոր կազմակերպություններ են:

Մշակող արդյունաբերության բաժնին դասված կազմակերպությունների 47.8 տոկոսը գերփոքր, 45.9 տոկոսը փոքր, 2.7 տոկոսը միջին և 3.6 տոկոսը խոշոր կազմակերպություններ են: Ըստ որում, այս ոլորտի փոքր կազմակերպությունները կազմում են փոքր կազմակերպությունների ընդամենի 17.1 տոկոսը, խոշոր կազմակերպությունները՝ 5.4 տոկոսը:

Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման բաժինը ներկայացնող կազմակերպությունների 50.0 տոկոսը խոշոր (ընդամենը խոշոր կազմակերպությունների 6.7 տոկոսը), 20.0-ական տոկոսը փոքր և միջին, 10.0 տոկոսը գերփոքր կազմակերպություններ են:

Շինարարության բաժինը ներկայացնող կազմակերպությունների մեջ, հակառակը, գերակշռում են փոքր և գերփոքր կազմակերպությունները, համապատասխանաբար, 42.1-ական տոկոսը: Փոքր կազմակերպությունների 27.4 տոկոսը ներկայացված է այս բաժնում:

Առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման բաժնում գերակայում են գերփոքր կազմակերպությունները՝ կազմելով բաժնի կազմակերպությունների 69.8 տոկոսը, ընդհանուրի՝ 50.3 տոկոսը:

Ծառայությունների բաժինը ներկայացնող կազմակերպությունների շարքում ևս գերակայում է գերփոքր կազմակերպությունների կշիռը՝ 52.4 տոկոս, ինչը կազմում է գերփոքր կազմակերպությունների ընդամենի 21.9 տոկոսը:


Հյուրանոցների և ռեստորանների կազմակերպման գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները կազմել են ծառայությունների ոլորտի կազմակերպությունների 20.7 տոկոսը, տրանսպորտ և կապ ոլորտի կազմակերպությունները՝ 22.5 տոկոսը:

Խոշոր կազմակերպությունների 27.0 տոկոսը ներկայացված են շինարարության, 20.3 տոկոսը՝ առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման, 12.2 տոկոսը՝ տրանսպորտի և կապի բաժիններում:

Ըստ շրջանների բաշխվածության, գործող գերփոքր կազմակերպությունների 69.6 տոկոսը հաշվառված է քաղաք Ստեփանակերտում: Տեսակարար կշռի առումով Ստեփանակերտ քաղաքին հաջորդում են Մարտունու (6.6 տոկոս), Մարտակերտի (6.4 տոկոս), Ասկերանի (5.9 տոկոս), Հաղրուփի (4.8 տոկոս), Շուշիի (3.9 տոկոս) շրջանները (հավելված 1, աղյուսակ 7):

Գործող գերփոքր կազմակերպությունների բաշխումն ըստ շրջանների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Գործող գերփոքր կազմակերպությունների բաշխումն ըստ շրջանների (տոկոսներով ընդամենի նկատմամբ)



Խոշոր կազմակերպությունների 82.4 տոկոսը հաշվառված է մայրաքաղաքում, 6.8 տոկոսը՝ Ասկերանի, 4.1 տոկոսը՝ Մարտունու, 2.7- ական տոկոսը՝ Մարտակերտի և Շուշիի շրջաններում, 1.3 տոկոսը՝ Հաղրուփի շրջանում:


Բոլոր շրջաններում (բացի Շահումյանի շրջանից) և Ստեփանակերտ քաղաքում հաշվառված կազմակերպությունների մեծամասնությունը՝ 50.8 տոկոսից (Ասկերանի շրջան) մինչև 70.0 (Շուշիի շրջան) տոկոսը, դասվել է գերփոքր կազմակերպությունների շարքին:

Հետազոտության արդյունքներով Շահումյանի շրջանում չեն արձանագրվել միջին և խոշոր, Հաղրուփի և Մարտակերտի շրջաններում՝ միջին, իսկ Քաշաթաղի շրջանում՝ խոշոր կազմակերպություններ(հավելված 1, աղյուսակ 7):

Գիտարկելով կազմակերպությունները ըստ 2011թ. ընթացքում գործելու տևողության որոշվող չափանիշի, հետազոտությամբ պարզվել է, որ գործող կազմակերպությունների 81.9 տոկոսը գործել են 9 ամսից ավելի, 7.1 տոկոսը՝ 6-9 ամիս, 5.9 տոկոսը՝ 3-6 ամիս, 5.1 տոկոսը՝ գործել են մինչև 3 ամիս (հավելված 1, աղյուսակներ 11, 12, 13):

Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ հաշվետու տարում գործելու տևողության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ հաշվետու տարում գործելու տևողության



Ստեփանակերտ քաղաքում և բոլոր շրջաններում գործող կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը (բացի Շահումյանի շրջանից) 65.2 տոկոսից (Քաշաթաղի շրջան) մինչև 93.0 տոկոսը (Հաղրուփի շրջան) հաշվետու ժամանակաշրջանում 9 ամսից ավել են գործել, Շահումյանի շրջանում՝ 66.7 տոկոսը գործել են 6-9 ամիս:

Ստեփանակերտ քաղաքում գործող կազմակերպությունների 6.6 տոկոսը 2011թ. գործել է 3-6 ամիս, 6.3 տոկոսը՝ 6-9 ամիս և 5.1 տոկոսը՝ մինչև 3 ամիս ժամկետներով:

Մինչև 3 ամիս գործունեություն իրականացրած կազմակերպությունների 71.4 տոկոսը բաժին է ընկել Ստեփանակերտ քաղաքին, 12.3 տոկոսը՝ Մարտունու, 6.1 տոկոսը՝ Ասկերանի, 4.1-ական տոկոսը՝ Շուշիի և Քաշաթաղի, 2.0 տոկոսը՝ Մարտակերտի շրջաններին: Հաղրուփի և Շահումյանի շրջաններում մինչև 6 ամիս գործունեություն իրականացրած կազմակերպություն հետազոտությամբ չի արձանագրվել:

Գյուղատնտեսությունը, որսորդությունն ու անտառային տնտեսությունը ներկայացնող կազմակերպությունների 71.4 տոկոսը հաշվետու ժամանակաշրջանում գործել է 9 ամսից ավել, 14.3 տոկոսը՝ մինչև 3 ամիս ժամկետներով (հավելված 1, աղյուսակներ 16):

Հաշվետու ժամանակաշրջանում մինչև 3 ամիս գործունեություն իրականացրած կազմակերպությունների 34.7 տոկոսը ներկայացնում են առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման, 28.6 տոկոսը՝ շինարարության բաժինները:


9 ամսից ավել են գործել պետական կառավարման ոլորտի կազմակերպությունների 100տոկոսը, կոմունալ, անհատական և այլ ծառայությունների ոլորտի կազմակերպությունների 91.8տոկոսը և առողջապահության ու սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների 90.9 տոկոսը:

6.1.2. Անհատ ձեռնարկատերերի տնտեսական ակտիվությունը և չափերը

Ինչպես արդեն նշվեց սույն հետազոտությամբ ընդգրկվել է 5431 անհատ ձեռնարկատեր: Նշված անհատ ձեռնարկատերերից հարցման ժամանակաընթացքում գործել են 2795-ը, կամ ընդամենի 51.5%-ը, չեն գործել 2483-ը կամ ընդամենի 45.7%-ը, հրաժարվել են 11-ը կամ ընդամենի 0.2%-ը, իսկ 142-ը (2.6%) չեն հայտնաբերվել (հասցեների անհամապատասխանություն, հանրապետությունից բացակայություն և այլն) (հավելված 2, աղյուսակներ 1, 2, 3):

Հետազոտված անհատ ձեռնարկատերերի տնտեսական ակտիվությունը և դրանց չհայտնաբերվելու հանգամանքն արտացոլված է գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Հետազոտության մեջ ընդգրկված անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ գործելու, չգործելու և չհայտնաբերվելու հատկանիշների




Ստեփանակերտ քաղաքին բաժին է ընկնում հանրապետությունում գրանցված անհատ ձեռնարկատերերի 49,7տոկոսը, գործողների՝ 50.4տոկոսը, չգործողների՝ 46.8 տոկոսը, հրաժարվողների՝ 100.0 տոկոսը և չհայտնաբերվածների՝ 83.8տոկոսը:

Գրանցված անհատ ձեռնարկատերերի ըստ շրջանային բաշխվածության կառուցվածքում զգալի կշիռ ունի Մարտունու շրջանը՝ 13.3տոկոս, շրջանին է պատկանում նաև գործող անհատ ձեռնարկատերերի 13.0տոկոսը, չգործողների՝ 13.9տոկոսը, համեմատաբար բարձր է չհայտնաբերվածների կշիռը ընդհանուրի մեջ՝ 7,8 տոկոս:

Մարտակերտի շրջանում հաշվառված է հանրապետությունում գրանցված անհատ ձեռնարկատերերի 11,4տոկոսը, չհայտնաբերվածների կառուցվածքում շրջանը ունի 0,7 տոկոս կշիռ: Հաղբուքի շրջանում հաշվառված է հանրապետությունում գրանցված անհատ ձեռնարկատերերի 6.4տոկոսը, չհայտնաբերվածներ շրջանում չեն արձանագրվել: Հետազոտությանը մասնակցելուց հրաժարվածներ արձանագրվել են միայն Ստեփանակերտ քաղաքում:

Ըստ շրջանների բաշխվածության, գործող անհատ ձեռնարկատերերի տեսակարար կշիռն առավել բարձր է եղել Հաղբուքի շրջանում, որտեղ այն կազմել է տվյալ շրջանի ընդամենի 55.2 տոկոսը, ցածր է եղել Քաշաթաղի շրջանում, որտեղ գործող անհատ ձեռնարկատերերը կազմել են տվյալ շրջանի ընդամենի 43.5 տոկոսը: Չգործող անհատ ձեռնարկատերերի առումով առավել բարձր տեսակարար կշռով առանձնացել է Քաշաթաղի շրջանը, որտեղ չգործող անհատ ձեռնարկատերերը կազմել են տվյալ շրջանի ընդամենի 55.4 տոկոսը, իսկ համեմատաբար ցածր տեսակարար կշռով՝ Ստեփանակերտը՝ 43.0 տոկոս:

Գծապատկեր 6. Հետազոտության մեջ ընդգրկված անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ գործելու, չգործելու, հրաժարվելու և չհայտնաբերվելու հատկանիշների՝ շրջաններով




Համաձայն հետազոտության արդյունքների, գործող անհատ ձեռնարկատերերի 35.0 տոկոսը (կամ 979 անհատ ձեռնարկատերեր) գործունեություն է իրականացրել գրանցման վայրից տարբերվող հասցեում(հավելված 2, աղյուսակներ 4, 5):

Գրանցման վայրից տարբերվող գործունեության իրականացման վայր ունենալու դեպքերը արձանագրվել են բոլոր շրջաններում, բացի Հաղրուքի և Շահումյանի շրջաններից, իսկ Մարտակերտի, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում տարբերությունները դիտարկվել են շրջանի սահմաններում:

Դիտարկելով անհատ ձեռնարկատերերն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, հետազոտությամբ պարզվել է, որ գերփոքր են եղել գործող անհատ ձեռնարկատերերի 99.0 տոկոսը, փոքր՝ 0.9 տոկոսը: Միջին անհատ ձեռնարկատերերի տեսակարար կշիռը կազմել է 0.1 տոկոս(հավելված 2, աղյուսակ 6) :

Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի



Միջին անհատ ձեռնարկատերերը ներկայացնում են առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման (բաժնի անհատ ձեռնարկատերերի 0.1 տոկոսը) բաժինը՝ ունենալով 100.0 տոկոս կշիռ:

Փոքր անհատ ձեռնարկատերերը ներկայացնում են մշակող արդյունաբերությունը (բաժնի անհատ ձեռնարկատերերի 7.4 տոկոսը), շինարարությունը (բաժնի անհատ ձեռնարկատերերի 33.3 տոկոսը), առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման և ծառայությունների (բաժինների անհատ ձեռնարկատերերի համապատասխանաբար 0.4 և 0.9 տոկոսը) բաժինները՝ ունենալով համապատասխանաբար 40.0, 8.0, 32.0 և 20.0 տոկոս կշիռներ:

Գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության և ձկնորսության, ձկնաբուծության ոլորտներում գործում են ընդամենը 3-ական անհատ ձեռնարկատեր կամ

գործող անհատ ձեռնարկատերի 0.1-ական տոկոսը:

Մշակող արդյունաբերության ոլորտում գործող անհատ ձեռնարկատերի թիվը 135 է, ինչը կազմում է գործող անհատ ձեռնարկատերերի թվի 4.8 տոկոսը: Գործող անհատ ձեռնարկատերերի գերակշիռ մասը՝ 75.0 տոկոսը կամ 2095 անհատ ձեռնարկատեր ներկայացնում է առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման բաժինը, 19.7 տոկոսը կամ 551 անհատ ձեռնարկատեր գործունեություն են իրականացնում ծառայությունների ոլորտում:


Ըստ շրջանների բաշխվածության քաղաք Ստեփանակերտում հաշվառված են գործող գերփոքր, փոքր և միջին անհատ ձեռնարկատերերի համապատասխանաբար 50.2, 76.0 և 100.0 տոկոսը (հավելված 2, աղյուսակ 7):

Գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության բաժինը ներկայացնող անհատ ձեռնարկատերերը գործում են Ստեփանակերտում, Ասկերանի և Շուշիի շրջաններում (համապատասխանաբար 33.3-ական տոկոս): Մշակող արդյունաբերության ոլորտում գործող անհատ ձեռնարկատերերի 49.6 տոկոսը հաշվառված են Ստեփանակերտ քաղաքում, 12.6 տոկոսը՝ Մարտունու, 10.4 տոկոսը՝ Մարտակերտի, 8.9-ական՝ տոկոսը Ասկերանի և Հաղրուփի, 5.2 տոկոսը՝ Քաշաթաղի, 2.9 տոկոսը՝ Շուշիի և 1.5 տոկոսը՝ Շահումյանի շրջաններում:

Շինարարության ոլորտում գործում է 6 անհատ ձեռնարկատեր Ստեփանակերտ քաղաքում:

Գործող գերփոքր և փոքր անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ շրջանների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 8-ում:


Գծապատկեր 8. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ շրջանների(տոկոսներով շրջանի ընդամենի նկատմամբ) և աշխատողների թվաքանակով որոշվող չափերի



Առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման ոլորտում գործող անհատ ձեռնարկատերերի 49.3 տոկոսը բաժին է ընկնում Ստեփանակերտ քաղաքին, 13.8 տոկոսը՝ Մարտունու, 11.9 տոկոսը՝ Մարտակերտի, 8.9 տոկոսը՝ Ասկերանի, 7.3 տոկոսը՝ Հաղրուփի շրջաններին:

Գործող անհատ ձեռնարկատերերի տարածքային բաշխումն ըստ գործունեության ոլորտների բերված է գծապատկեր 9-ում:


Գծապատկեր 9. Գործող անհատ ձեռնարկատերերի տարածքային բաշխումն ըստ գործունեության ոլորտների (տոկոսներով շրջանի ընդամենի նկատմամբ)



Հետազոտությամբ պարզվել է, որ անհատ ձեռնարկատերերի 9.9 տոկոսը գործել է մինչև 3 ամիս, ընդ որում այս միջակայքում տեսակարար կշիռն առավել բարձր է եղել Շահումյանի շրջանում, որտեղ նշված ցուցանիշը կազմել է տվյալ շրջանի ընդամենի 17.8 տոկոսը: Հաշվետու տարում 3-6 ամիս և 6-9 ամիս գործունեություն իրականացրած անհատ ձեռնարկատերերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 9.2 տոկոս և 9.7տոկոս: 9 ամսից ավելի գործել են ձեռնարկատերերի 71.2%-ը (հավելված 2, աղյուսակներ 8, 9, 10):


Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հաշվետու տարում գործելու տևողության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 10-ում:

Գծապատկեր 10. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հաշվետու տարում գործելու տևողության(տոկոսով ընդամենի նկատմամբ)



Ըստ գործունեության ժամանակաշրջանի անհատ ձեռնարկատերերի դիտարկումը տարածքային կտրվածքով խոսում է բոլոր շրջաններում 9 ամսից ավելի գործունեություն իրականացնողների տեսակարար կշիռների առաջանցիկության մասին՝ 55.5 տոկոսից (Շահումյանի շրջան) մինչև 76.0 տոկոս(Հաղրուքի շրջան): Ստեփանակերտ քաղաքում գործող անհատ ձեռնարկատերերի 70.9 տոկոսը գործել է 9 ամսից ավելի, 10.8 տոկոսը՝ մինչև 3 ամիս, 9.4 տոկոսը՝ 6-9 ամիս և 8.9 տոկոսը՝ 3-6 ամիս ժամանակաշրջանի միջակայքում:


Գծապատկեր 11. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հաշվետու տարում գործելու տևողության շրջանային կտրվածքով(տոկոսներով շրջանի ընդամենի նկատմամբ)



Գործող անհատ ձեռնարկատերերի տարվա ընթացքում գործելու տևողության՝ ըստ ՏԳՏԳ բաժինների դիտարկումը ցույց է տալիս, որ հաշվետու տարում 9 ամսից ավելի

գործունեություն են ծավալել շինարարություն, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում բաժնի անհատ ձեռնարկատերերի 78.1%-ը, առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում բաժնի անհատ ձեռնարկատերերի 75.4%-ը, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալություն և սպառողներին ծառայությունների մատուցում բաժնի անհատ ձեռնարկատերերի 70.5%-ը, մշակող արդյունաբերություն բաժնի անհատ ձեռնարկատերերի 67.4%-ը, կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցում բաժնի անհատ ձեռնարկատերերի 63.4%-ը, տրանսպորտի և կապի բաժնի անհատ ձեռնարկատերերի 55.9%-ը, հյուրանոցների և ռեստորանների բաժնի անհատ ձեռնարկատերերի 44.1%-ը (հավելված 2, աղյուսակ 11):

Գծապատկեր 12. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ ՏԳՏԴ բաժինների ու հատվածների և գործելու տևողության




6.2 Կազմակերպությունների կազմակերպական-իրավական ձևերն ու հիմնադիրները

Հետազոտության արդյունքների համաձայն, գործող կազմակերպությունների գերակշիռ մեծամասնության համար կազմակերպական-իրավական ձև է հանդիսացել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 73.3 տոկոսը(հավելված 1, աղյուսակ 8.9.10):


Բաժնետիրական ընկերությունների (փակ և բաց) տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 19.3 տոկոսը կամ 186 կազմակերպություն: Ընդ որում, փակ բաժնետիրական ընկերությունները կազմել են բաժնետիրական ընկերությունների ընդամենի 97.8 տոկոսը: Ինչ վերաբերում է կազմակերպական-իրավական այլ ձևերին, ապա դրանք են՝ արտադրական կոոպերատիվներ և պետական ձեռնարկություններ, որոնց տեսակարար կշիռը հանրագումարով կազմել են ընդամենի 7.4 տոկոսը:

Դիտարկված գործող կազմակերպությունների բաշխումն ըստ կազմակերպական-իրավական ձևերի բերված է գծապատկեր 13-ում.

Գծապատկեր 13. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ կազմակերպական-իրավական ձևերի (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Գծապատկեր 14. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ կազմակերպական-իրավական ձևերի շրջանային կտրվածքով (տոկոսներով շրջանի ընդամենի նկատմամբ)



Արտադրական կոոպերատիվների 51.5 տոկոսը հաշվառված են Ստեփանակերտ քաղաքում, 22.1 տոկոսը՝ Մարտունու շրջանում, 13.2 տոկոսը՝ Ասկերանի շրջանում: Կազմակերպական իրավական այս ձևով գործող կազմակերպություններ չկան Շահումյանի և Քաչարանի շրջաններում (հավելված 1, աղյուսակ 17,18,19):

Գործող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների 71.9 տոկոսը հաշվառված է Ստեփանակերտ քաղաքում, 6.1 տոկոսը՝ Մարտակերտի շրջանում, 5.7 տոկոսը՝ Ասկերանի շրջանում:


Գործող փակ բաժնետիրական ընկերությունների զգալի մասը (75.3 տոկոսը) ևս հաշվառված է Ստեփանակերտ քաղաքում, 7.1 տոկոսը՝ Ասկերանի, 4.4-ական տոկոսը՝ Հաղթոթի և Մարտունու շրջաններում, 3.3-ական տոկոսը՝ Մարտակերտի և Շուշիի շրջաններում:

Պետական ձեռնարկություն իրավակազմակերպական ձևով կազմակերպությունները գործում են Ստեփանակերտ քաղաքում և Շուշիի շրջանում:

Բաց բաժնետիրական ընկերությունների 50.0 տոկոսը գործել է շինարարության ոլորտում, 25.0-ական տոկոսը՝ մշակող արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի արտադրության և բաշխման ոլորտներում: Առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտին առավել բնութագրական է փակ բաժնետիրական ընկերությունները՝ 81.8 տոկոսը, մնացած 18.2 տոկոսը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ են: Գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, հանքագործական արդյունաբերության, տրանսպորտի և

կապի, կրթության և ֆինանսական գործունեության ոլորտներում գործող կազմակերպությունները ևս ներկայացված են իրավակազմակերպական երկու՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և փակ բաժնետիրական ընկերությունների ձևերով:

Գծապատկեր 15. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ գործունեության բաժինների և իրավակազմակերպական ձևերի, %




Մասնաճակատային պատասխանատվությամբ ընկերությունները մեծամասնություն են կազմում գործունեության բոլոր ոլորտներում, բացառությամբ պետական կառավարման, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման, առողջապահության, սոցիալական ծառայությունների և կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցման բնագավառների: Ֆինանսական գործունեության բաժնում գործող ընկերությունները հավասարաչափ են բաշխվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և փակ բաժնետիրական ընկերության միջև:

Արտադրական կոդաբեռատիվների մեծ մասը՝ 45.6 տոկոսը, գործել է առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման բաժնում, 19.1 տոկոսը՝ շինարարության և 17.6 տոկոսը՝ մշակող արդյունաբերության ճյուղերում:

Հաշվետու ժամանակահատվածում բոլոր պետական ձեռնարկությունները և բաց բաժնետիրական ընկերությունները գործել են 9 ամսից ավել ժամկետով, փակ բաժնետիրական ընկերությունների 2.8 տոկոսը գործել է մինչև 3 ամիս ժամկետով, 90.1 տոկոսը՝ 9 ամսից ավել ժամկետով: Իրավակազմակերպական մյուս տեսակների ճնշող մեծամասնության համար ևս բնորոշ էր գործելու 9 ամսից ավել ժամկետը՝ 79.6 տոկոսից մինչև 82.4 տոկոսը(հավելված 1, աղյուսակ 14, 15):

Գծապատկեր 16. Գործող իրավաբանական անձանց բաշխումը կազմակերպական-իրավական ձևերով ըստ հաշվետու տարում գործելու տևողության




Հետազոտության արդյունքներով, որպես կազմակերպությունների հիմնադիրներ գերազանցապես հանդես են եկել քաղաքացիները, որոնց սեփականության իրավունքով պատկանող կազմակերպությունների ընդհանուր քանակը կազմել է գործող կազմակերպությունների 63.4 տոկոսը (կամ 611 կազմակերպություն):

Գործող կազմակերպությունների ընդհանուր քանակում իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կազմակերպությունների ընդհանուր քանակը կազմել է 29.0 տոկոս, պետությանը՝ 6.1 տոկոս, համայնքինը՝ 1.5 տոկոս (հավելված 1, աղյուսակ 20, 21, 22):

Դիտարկված գործող կազմակերպությունների բաշխումն ըստ կազմակերպության հիմնադիր(մասնակից) հանդիսացողների սեփականության սուբյեկտների (կրողների) բերված է գծապատկեր 17-ում.

Գծապատկեր 17. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ կազմակերպության հիմնադիր(մասնակից) հանդիսացողների սեփականության սուբյեկտների (տոկոսով ընդամենի նկատմամբ)




Ըստ հետազոտության հարցաթերթերի տվյալների գործող կազմակերպությունների 3.9 տոկոսի հիմնադիրների(մասնակիցների) կազմում առկա են նաև օտարերկրյա իրավաբանական անձինք և քաղաքացիներ: Այս առումով արձանագրված ամենաբարձր ցուցանիշը՝ 8.7 տոկոս, դիտարկվել է Քաշաթաղի շրջանում:

Ստեփանակերտ քաղաքում գործող կազմակերպությունների 70.3 տոկոսի հիմնադիրները քաղաքացիներ են, 21.9 տոկոսինը՝ իրավաբանական անձինք, 6.5 տոկոսինը՝ պետությունը, 1.3 տոկոսինը՝ համայնքը:

Ըստ հիմնադիրների դիտարկման Ասկերանի շրջանում ևս գերակայում է քաղաքացիների մասնակցությունը՝ գործող կազմակերպությունների 84.1 տոկոսի հիմնադիր են հանդիսանում քաղաքացիները: Մարտակերտի, Մարտունու, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում, համապատասխանաբար, 67.3 տոկոսի, 54.9 տոկոսի, 50.0տոկոսի և 65.2 տոկոսի հիմնադիրները իրավաբանական անձինք են: Շահումյանի շրջանում հաշվետու ժամանակաշրջանում գործող բոլոր կազմակերպությունների հիմնադիրները հավասարաչափ են բաշխվել համայնքի, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև, իսկ Հաղբուփի շրջանում՝ համապատասխանաբար, 46.5-ական տոկոսի հիմնադիրներ են հանդիսացել քաղաքացիները և իրավաբանական անձինք:

Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ կազմակերպության հիմնադիրների՝ շրջանային կտրվածքով բերված է գծապատկեր 18-ում.

Գծապատկեր 18. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ կազմակերպության հիմնադիրների՝ շրջանային կտրվածքով (տոկոսով ընդամենի նկատմամբ)



6.3. Տնտեսավարող սուբյեկտների բաշխումն ըստ գործունեության տեսակների

6.3.1. Կազմակերպությունների բաշխումն ըստ գործունեության տեսակների

Հետազոտության արդյունքներով պարզվել է, որ գործող կազմակերպությունների 79.2 տոկոսը զբաղվել է գործունեության միայն մեկ, իսկ 20.8 տոկոսը՝ երկու և ավելի տեսակով: Ընդ որում, միայն մեկ գործունեության տեսակով զբաղվող կազմակերպությունների 41.7 տոկոսը, որպես գործունեության տեսակ նշել է «առևտուրը և ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների ու անձնական օգտագործման իրերի նորոգումը», 20.3 տոկոսը՝ «շինարարությունը», 11.1 տոկոսը՝ «մշակող արդյունաբերությունը»: Տեսակարար կշռով, թվարկվածներին հաջորդում է «անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում» գործունեության տեսակը՝ 5.8 տոկոսը, այնուհետև «տրանսպորտը և կապը», որի տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 4.9 տոկոսը, «կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցումը»՝ 3.8 տոկոսը, «հյուրանոցները և ռեստորանները»՝ 3.7 տոկոսը(հավելված 1, աղյուսակ 6, 23):

Ինչ վերաբերում է գործունեության երկու և ավելի տեսակով զբաղվող կազմակերպությունների քանակին, ապա որպես ոչ հիմնական գործունեության տեսակ հիմնականում գերակայող է եղել «առևտուր և ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների ու անձնական օգտագործման իրերի նորոգում» գործունեության տեսակը (36.5%) :

Մեկ, ինչպես նաև երկու և ավելի գործունեություն իրականացնող կազմակերպությունների բաշխումն ըստ գործունեության հիմնական տեսակների (ոլորտների) բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ հիմնական գործունեության ոլորտների


Գործունեության ոլորտը	Կազմակերպությունների քանակը	Տոկոսով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	963	100.0
Գյուղատնտեսություն, ձկնորսություն	22	2.3
Արդյունաբերություն, որից՝ մշակող արդյունաբերություն	128	13.3
հանքագործական արդյունաբերություն	7	0.7
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	10	1.1
Շինարարություն	195	20.2

Գործունեության ոլորտը	Կազմակերպությունների քանակը	Տոկոսով ընդամենի նկատմամբ
Առևտուր	391	40.6
Ծառայություններ, որից՝ անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	227	23.6
Կրթություն	50	5.2
Կենտրոնական կառավարում	3	0.3
Կրթություն	7	0.7

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակ 2-ից, գործող կազմակերպությունների համար, որպես գործունեության հիմնական տեսակ, ընդհանուր առմամբ, բնութագրական է եղել առևտուրը(40.6տոկոսը), ծառայությունները(23.6տոկոսը) և շինարարությունը (20.2 տոկոսը): Ընդ որում, ծառայությունների համախմբում բարձր տեսակարար կշիռ է ունեցել «տրանսպորտի և կապի ծառայությունների մատուցում» գործունեության տեսակով զբաղվող կազմակերպությունների քանակը, որը կազմել է տվյալ համախմբի ընդամենի 22.5 տոկոսը, իսկ արդյունաբերության համախմբում՝ «մշակող արդյունաբերություն» գործունեության տեսակը՝ 86.7 տոկոս, որում էլ իր հերթին գերակայող են եղել «աննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրություն» (տվյալ գործունեության տեսակի ընդամենի 35.1 տոկոսը), «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն»(22.5տոկոս), «բնափայտի մշակում, փայտից և խցանակեղևից արտադրատեսակների արտադրություն, բացի կահույքից (11.7տոկոս), «պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն» և «կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն» (9.9-ական տոկոս) գործունեության տեսակները:

Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ դրանց կողմից իրականացվող հիմնական գործունեության տեսակների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 19-ում:

Գծապատկեր 19. Հետազոտության մեջ ընդգրկված գործող կազմակերպությունների բաշխումն ըստ հիմնական գործունեության տեսակների



Գյուղատնտեսության և ձկնորսություն ոլորտում գործող կազմակերպությունների 36.4 տոկոսը հաշվառված է Ստեփանակերտ քաղաքում, 18.2-ական տոկոսը՝ Ասկերանի և Մարտունու, 9.1-ական տոկոսը՝ Մարտակերտի և Շուշիի և 4.5-ական տոկոսը՝ Հաղրուփի և Քաշաթաղի շրջաններում: Ոլորտում գործող կազմակերպություններ չկան հաշվառված Շահումյանի շրջանում: Հանքագործական արդյունաբերությունում գործող կազմակերպությունների 57.1 տոկոսը հաշվառված է Ստեփանակերտ քաղաքում, 28.6 տոկոսը՝ Ասկերանի շրջանում, 14.3 տոկոսը՝ Քաշաթաղի շրջանում: Հյուրանոցների և ռեստորանների կազմակերպման գործունեություն իրականացնողների 76.6 տոկոսը հաշվառված է մայրաքաղաքում, 8.5 տոկոսը՝ Հաղրուփի, 6.4 տոկոսը՝ Շուշիի, 4.3 տոկոսը՝ Ասկերանի և 2.1-ական տոկոսը՝ Մարտակերտի և Քաշաթաղի շրջաններում: Ֆինանսական գործունեություն իրականացրած բոլոր կազմակերպությունները հաշվառված են մայրաքաղաքում:

6.3.2. Անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ գործունեության տեսակների

Ըստ հետազոտության տվյալների գործող անհատ ձեռնարկատերերի 96.0%-ը զբաղվել է գործունեության միայն մեկ, իսկ 4.0 տոկոսը՝ երկու և ավելի տեսակով: Ընդ որում, միայն մեկ գործունեության տեսակով զբաղվող անհատ ձեռնարկատերերի 75.44 տոկոսը, որպես գործունեության տեսակ նշել է «առևտուր և ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների ու անձնական օգտագործման իրերի նորոգումը», 6.52 տոկոսը՝ «տրանսպորտը և կապը», 5.48 տոկոսը՝ «հյուրանոցները և ռեստորանները», 5.26 տոկոսը՝ «կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցումը», 4.29 տոկոսը՝ «մշակող արդյունաբերությունը»: Ինչ վերաբերում է գործունեության երկու և ավելի տեսակով զբաղվող անհատ ձեռնարկատերերի քանակին, ապա որպես ոչ հիմնական գործունեության տեսակ, ինչպես և վերը նկարագրվածի պարագայում էր, հիմնականում գերակայող է եղել «առևտուր և ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների ու անձնական օգտագործման իրերի նորոգում» գործունեության տեսակը՝ (63.4 տոկոս) (հավելված 2, աղյուսակ 12):

Մեկ, ինչպես նաև երկու և ավելի տեսակի գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ գործունեության հիմնական տեսակների (ոլորտների) բերված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.


Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հիմնական գործունեության ոլորտների

Գործունեության ոլորտը	Անհատ ձեռնարկատերերի քանակը	Տոկոսով ընդամենի նկատմամբ
Ընդամենը	2795	100.0
Գյուղատնտեսություն, ձկնորսություն	6	0.21
Արդյունաբերություն	137	4.90
<i>հանքագործական արդյունաբերություն</i>	2	0.07
<i>մշակող արդյունաբերություն</i>	135	4.83
Շինարարություն	6	0.22
Առևտուր	2095	74.96
Ծառայություններ, որից՝	551	19.71
<i>հյուրանոցներ և ռեստորաններ</i>	161	5.76
<i>տրանսպորտ և կապ</i>	177	6.33
<i>անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպասողներին ծառայությունների մատուցում</i>	44	1.57
<i>կրթություն</i>	1	0.04
<i>առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում</i>	26	0.93
<i>կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում</i>	142	5.08

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակ 3-ից, գործող անհատ ձեռնարկատերերի համար, որպես գործունեության հիմնական տեսակ, ընդհանուր առմամբ, բնութագրական է եղել առևտուրը, ծառայությունները և արդյունաբերությունը: Ընդ որում, ծառայությունների համախմբում բարձր տեսակարար կշիռ են ունեցել «տրանսպորտ և կապ», «հյուրանոցներ և ռեստորաններ» և «կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում», գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի քանակը, որոնք կազմել են տվյալ համախմբի ընդամենի համապատասխանաբար 32.1, 29.2 և 25.8 տոկոսը, իսկ արդյունաբերության համախմբում՝ «մշակող արդյունաբերությունը»՝ 98.5

տոկոս: Այս գործունեության տեսակում էլ գերակայող է եղել «աննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրություն» (տվյալ գործունեության տեսակի ընդամենի 65.2 տոկոսը) գործունեության տեսակը: Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ դրանց կողմից իրականացվող հիմնական գործունեության տեսակների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 20-ում:

Գծապատկեր 20. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հիմնական



6.4.Տնտեսավարող սուբյեկտների բաշխումն ըստ հասույթի


6.4. 1.Կազմակերպությունների բաշխումն ըստ հասույթի

Հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռել նաև տեղեկատվություն ստանալ գործող կազմակերպությունների կողմից իրացված արտադրանքի, ապրանքների և մատուցված ծառայությունների դիմաց ստացված հասույթի ցուցանիշների վերաբերյալ: Համաձայն ստացված արդյունքների, գործող կազմակերպությունների կողմից 2011թ. ընթացքում արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթը կազմել է 152430.3մլն դրամ, որի 27.3 տոկոսը կամ 41697.9 մլն դրամը ձևավորվել է արդյունաբերության, 21.7 տոկոսը կամ 33007.6 մլն դրամ՝ շինարարության, 39.9 տոկոսը կամ 60781.1մլն դրամը՝ առևտրի, 10.5 տոկոսը կամ 16069.1 մլն դրամը՝ ծառայությունների ոլորտում, իսկ մյուս ոլորտների տեսակարար կշիռները եղել են աննշան (հավելված 1, աղյուսակ 24):

Հասույթի ձևավորման կառուցվածքում գերակայող են եղել խոշոր կազմակերպությունները, որոնց գործունեության արդյունքում ձևավորված հասույթը կազմել է ընդամենի 50.0 տոկոսը (կամ 76204.8մլն դրամ): Տեսակարար կշռով խոշոր կազմակերպությունների կողմից ձևավորված հասույթի ցուցանիշին հաջորդել են փոքր կազմակերպությունները, որոնց գործունեության արդյունքում ձևավորված հասույթի ցուցանիշը 2011թ. կազմել է ընդամենի 22.6 տոկոսը կամ մոտ 34481.4 մլն դրամ:

Կազմակերպությունների կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 21-ում:

Գծապատկեր 21. Գործող կազմակերպությունների կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի



Կազմակերպությունների կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխման կառուցվածքն ըստ գործունեության ոլորտների՝ ներկայացված է ստորև բերված աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Գործող կազմակերպությունների հասույթի կառուցվածքն ըստ գործունեության ոլորտների, տոկոսներով

Գործունեության ոլորտները	այդ թվում՝ ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի				Ընդամենը
	գերփոքր	փոքր	միջին	խոշոր	
Ընդամենը	16.3	22.6	11.1	50.0	100.0
Գյուղատնտեսություն, ձկնորսություն	5.3	51.0	29.5	14.2	100.0
Արդյունաբերություն, որից՝	1.7	13.1	2.6	82.6	100.0
մշակող արդյունաբերություն	5.8	46.1	8.5	39.6	100.0
հանքագործական արդյունաբերություն	0,4	1,5	-	98,1	100.0
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	0,3	3,3	2,1	94,3	100.0
Շինարարություն	5,5	32,2	9,1	53,2	100.0
Առևտուր	34,1	26,4	19,6	19,9	100.0
Ծառայություններ, որից՝	9,2	12,0	4,0	74,8	100.0
անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	39,6	31,4	-	29,0	100.0
սլեսական կառավարում	2,3	11,2	-	86,5	100.0
կրթություն	1,0	6,1	-	92,9	100.0

Գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության բաժնի կազմակերպությունների հաշվետու ժամանակաշրջանի հասույթի 51.0 տոկոսը բաժին է ընկնում փոքր, 29.5 տոկոսը՝ միջին, 14.2 տոկոսը՝ խոշոր և 5.3 տոկոսը՝ գերփոքր կազմակերպություններին:

Արդյունաբերության ոլորտում արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթի զգալի մասը՝ 82.6 տոկոսը բաժին է ընկնում խոշոր, 13.1 տոկոսը՝ փոքր, 2.6 տոկոսը՝ միջին, 1.7 տոկոսը՝ գերփոքր կազմակերպություններին:


Շինարարության ոլորտում հաշվետու ժամանակաշրջանում մատուցված ծառայությունների դիմաց ստացած հասույթի 53.2 տոկոսը խոշոր, 32.2 տոկոսը փոքր, 9.1 տոկոսը միջին և միայն 5.5 տոկոսն է բաժին ընկնում գերփոքր կազմակերպություններին:

Առևտրի ոլորտում արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթի 34.1 տոկոսը բաժին է ընկնում գերփոքր, 26.4 տոկոսը՝ փոքր, 19.6 տոկոսը՝ միջին, 19.9 տոկոսը՝ խոշոր կազմակերպություններին:

Ծառայությունների ոլորտում հաշվետու ժամանակաշրջանում ստացված հասույթի 74.8 տոկոսը բաժին է ընկել խոշոր, 12.0տոկոսը՝ փոքր, 9.2 տոկոսը՝ գերփոքր, 4.0 տոկոսը՝ միջին կազմակերպություններին:

Կազմակերպությունների կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխումն ըստ գործունեության ոլորտների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 22-ում:


Գծապատկեր 22. Գործող կազմակերպությունների հասույթի բաշխումն ըստ գործունեության ոլորտների(տոկոսով)



Հաշվետու ժամանակաշրջանում գործող՝ հետազոտությամբ ընդգրկված կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթի զգալի մասը՝ 82.2 տոկոսը բաժին է ընկել Ստեփանակերտ քաղաքին, 7.2 տոկոսը՝ Ասկերանի, 4.6տոկոսը՝ Մարտունու, 2.8տոկոսը՝ Հաղրուքի, 1.4տոկոսը՝ Մարտակերտի, 1.2տոկոսը՝ Քաշաթաղի, 0.5տոկոսը՝ Շուշիի, և 0.1տոկոսը՝ Շահումյանի շրջաններին:


Կազմակերպությունների կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխումն ըստ շրջանների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 23-ում:

Գծապատկեր 23. Գործող կազմակերպությունների բաշխումն ըստ հասույթի շրջանային կտրվածքով(տոկոսով)




Հետազոտությամբ ընդգրկված գործող կազմակերպությունների հասույթի՝ ըստ աշխատողների թվաքանակի դասակարգված կազմակերպության տեսակների շրջանային բաշխվածության դիտարկումը վկայում է, որ Ստեփանակերտ քաղաքում և Ասկերանի շրջանում հասույթի ձևավորման կառուցվածքում գերակայող են եղել խոշոր կազմակերպությունները, որոնց գործունեության արդյունքում ձևավորված հասույթը կազմել է ընդամենի 55.4տոկոսը Ստեփանակերտ քաղաքում և 52.2տոկոսը Ասկերանի շրջանում, Մարտակերտի, Շահումյանի, և Քաշաթաղի շրջաններում հասույթի ձևավորման կառուցվածքում գերակայող են եղել փոքր կազմակերպությունները, համապատասխանաբար, 50.5 տոկոս, 96.5 տոկոս և 81.8 տոկոս կշիռներով, իսկ Հաղրուքի, Մարտունու և Շուշիի շրջաններում՝ գերփոքր կազմակերպությունները՝ 51.1 տոկոս, 72.7տոկոս և 43.7 տոկոս կշիռներով:

Գծապատկեր 24. Գործող կազմակերպությունների հասույթի բաշխումը աշխատողների թվաքանակի չափորոշիչով՝ շրջանային կտրվածքով(տոկոսով)




Ինչպես կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունների ստացած հասույթի կառուցվածքում ամենամեծ կշիռն ունեն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ համապատասխանաբար 73.3տոկոս և 49.2տոկոս: Չնայած փակ բաժնետիրական ընկերությունները կազմել են կազմակերպությունների ընդհանուր թվի 18.9տոկոսը, նրանց բաժին է ընկել ընդհանուր հասույթի 42.0 տոկոսը(հավելված 1, աղյուսակ 25): Հատկանշական է, որ փակ և բաց բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև պետական ձեռնարկությունների հասույթում բարձր է խոշոր կազմակերպությունների հասույթի տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 81.8 տոկոս, 67.8 տոկոս և 97.2 տոկոս: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և արտադրական կոդպերատիվների հասույթներում մեծ տեսակարար կշիռ ունեն փոքր, իսկ առանձնացված ստորաբաժանումներում՝ միջին կազմակերպությունները՝ համապատասխանաբար 31.8 տոկոս և 52.0 տոկոս, 82.9 տոկոս կշիռներով:

Գծապատկեր 25. Գործող կազմակերպությունների հասույթի բաշխումը ըստ իրավակազմակերպական ձևերի



Կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում 87.4 տոկոսը կազմող գերփոքր և փոքր կազմակերպություններին բաժին է ընկել հասույթի 38.9 տոկոսը, աշխատավարձի ֆոնդի 22.6 տոկոսը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր թվաքանակի 12.6 տոկոսը կազմող միջին և խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել համապատասխանաբար 61.1 տոկոսը և 77.4 տոկոսը(հավելված 1, աղյուսակ 26):

Գծապատկեր 26. Գործող կազմակերպությունների բաշխումը ըստ չափերի, հասույթի և աշխատավարձի ֆոնդի




6.4.2. Անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հասույթի

Համաձայն ստացված արդյունքների, գործող անհատ ձեռնարկատերերի կողմից 2011թ. արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթը կազմել է մոտ 24818.2 մլն դրամ, որի 87.71 տոկոսը կամ 21768.6 մլն դրամը ձևավորվել է առևտրի, 8.1 տոկոսը կամ մոտ 2010.1 մլն դրամը արդյունաբերության ոլորտներում, 3.53 տոկոսը կամ մոտ 877.0 մլն դրամը ծառայությունների, իսկ մյուս ոլորտների տեսակարար կշիռները եղել են աննշան՝ ընդհանուր առմամբ 0.66 տոկոսը (հավելված 2, աղյուսակ 13):

Հասույթի ձևավորման կառուցվածքում գերակայող են եղել գերփոքր անհատ ձեռնարկատերերը, որոնց գործունեության արդյունքում ձևավորված հասույթը կազմել է ընդամենի 85.0%-ը (կամ մոտ 21089.1 մլն դրամ): Փոքր անհատ ձեռնարկատերերի գործունեության արդյունքում ձևավորված հասույթի ցուցանիշը 2011թ. կազմել է ընդամենի 8.5%-ը կամ մոտ 2104.5 մլն դրամ, իսկ միջին անհատ ձեռնարկատերերի նույն ցուցանիշը կազմել է ընդամենի 6.5%-ը կամ մոտ 1624.6 մլն դրամ: Անհատ ձեռնարկատերերի կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 27-ում:

Գծապատկեր 27. Գործող անհատ ձեռնարկատերերի հասույթի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի



Անհատ ձեռնարկատերերի ընդհանուր թվաքանակում ունենալով, համապատասխանաբար, 99.0 տոկոս, 0.9 տոկոս և 0.1 տոկոս տեսակարար կշիռներ գերփոքր, փոքր և միջին անհատ ձեռնարկատերերին բաժին է ընկել ընդհանուր հասույթի համապատասխանաբար 85.0 տոկոսը, 8.5 տոկոսը և 6.5 տոկոսը: Անհատ ձեռնարկատերերի կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխման կառուցվածքն ըստ գործունեության ոլորտների՝ ներկայացված է ստորև բերված աղյուսակ 5-ում:


Գործող անհատ ձեռնարկատերերի հասույթի կառուցվածքն ըստ գործունեության ոլորտների, տոկոսներով

Գործունեության ոլորտները	այդ թվում՝ ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի			Ընդամենը
	գերփոքր	փոքր	միջին	
Ընդամենը	85.0	8.5	6.5	100.0
Գյուղատնտեսություն, ձկնորսություն	100.0			100.0
Արդյունաբերություն, որից՝ <i>հանքագործական արդյունաբերություն</i>	39,7	60,3		100.0
<i>մշակող արդյունաբերություն</i>	100.0			100.0
<i>մշակող արդյունաբերություն</i>	39,1	60,9		100.0
Շինարարություն	15,5	84,5		100.0
Առևտուր	89,5	3,1	7,4	100.0
Ծառայություններ, որից՝ <i>հյուրանոցներ և ռեստորաններ</i>	88,7	11,3		100.0
<i>տրանսպորտ և կապ</i>	100.0			100.0
<i>տրանսպորտ և կապ</i>	83,5	16,5		100.0
<i>անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպասողներին ծառայությունների մատուցում</i>	70,1	29,9		100.0
<i>կրթություն</i>	100,0			100,0
<i>առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում</i>	93,0	7,0		100.0
<i>կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում</i>	85,3	14,7		100.0

Աղյուսակից բխում է, որ հաշվետու ժամանակաշրջանում գերփոքր անհատ ձեռնարկատերերի հասույթը ընդհանուրի մեջ գերակայող է եղել տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, բացի մշակող արդյունաբերությունից և շինարարությունից, որտեղ գերակայող են եղել փոքր անհատ ձեռնարկատերերի հասույթը, համապատասխանաբար՝ 60,9 և 84,5 տոկոս:

Անհատ ձեռնարկատերերի կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխումն ըստ գործունեության ոլորտների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 28-ում:

Գծապատկեր 28. Գործող անհատ ձեռնարկատերերի հասույթի բաշխումն ըստ գործունեության ոլորտների(տոկոսներով)




Հաշվետու ժամանակաշրջանում գործող անհատ ձեռնարկատերերի արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթի դիտարկումը շրջանային կտրվածքով խոսում է Ստեփանակերտ քաղաքում գործող անհատ

ձեռնարկատերերի հիշատակված ցուցանիշի գերակայության մասին՝ 57,6 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանում հայտարարագրված հասույթի 9,9 տոկոսը բաժին է ընկել Քաշաթաղի, 8,6 տոկոսը՝ Մարտունու, 7,5-ական տոկոսը՝ Մարտակերտի և Հադրութի, 6,3 տոկոսը՝ Ասկերանի, 1,6 տոկոսը՝ Շուշիի և 1,0 տոկոսը՝ Շահումյանի շրջաններում գործող անհատ ձեռնարկատերերին:

Անհատ ձեռնարկատերերի կողմից արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից հասույթի բաշխումն ըստ շրջանների և աշխատողների թվաքանակի չափորոշիչի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 29-ում:

Գծապատկեր 29. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հասույթի շրջանային կտրվածքով և աշխատողների թվաքանակի չափորոշիչի (տոկոսով)



Ինչպես և ներկայացված է գծապատկերում միջին անհատ ձեռնարկատերեր առկա էին միայն Մտեփանակերտ քաղաքում, որտեղ անհատ ձեռնարկատերերի թվաքանակում դրանց 0.1 տոկոս կշռին բաժին է ընկել հասույթի համապատասխանաբար 11.4 տոկոս կշիռ:

6.5. Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները


6.5.1. Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները կազմակերպություններում

Կատարված հետազոտությունը հնարավորություն տվեց նաև իրականացնել աշխատանքի վարձատրության ֆոնդի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի դասակարգված կազմակերպությունների միջև:

Այսպես, 2011թ արդյունքներով գործող կազմակերպությունների աշխատանքի վարձատրության ֆոնդի 69.7 տոկոսը բաժին է ընկել խոշոր, իսկ 18.2 տոկոսը փոքր, 7.7 տոկոսը միջին և 4.4տոկոսը գերփոքր կազմակերպություններին(հավելված 1, աղյուսակ 26):

2011թ գործող կազմակերպությունների աշխատանքի վարձատրության ֆոնդի բաշխումն շրջանային կտրվածքով արտացոլված է ստորև բերված գծապատկեր 30-ում:

Գծապատկեր 30. Գործող կազմակերպությունների աշխատանքի վարձատրության ֆոնդի բաշխումն շրջանային կտրվածքով (ընդհանուրի նկատմամբ, տոկոսով)



Ըստ չափերի աշխատավարձի ֆոնդի դիտարկումը ցույց է տալիս, որ խոշոր կազմակերպությունների մասնաբաժինը աշխատավարձի ֆոնդում զգալի է բոլոր իրավակազմակերպական ձևերի կազմակերպություններում՝ պետական ձեռնարկություններում (98.0 տոկոս), փակ բաժնետիրական ընկերություններում (83.5 տոկոս), բաց բաժնետիրական ընկերություններում (77.0 տոկոս), առանձնացված ստորաբաժանումներում (67.7 տոկոս), արտադրական կոոպերատիվներում և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում (48.9-ական տոկոս) (հավելված 1, աղյուսակ 27):


Միջին ամսական անվանական աշխատավարձի չափի ըստ կազմակերպությունների չափերի դիտարկմամբ պարզվում է, որ միջին ամսական աշխատավարձի մակարդակից բարձր ցուցանիշ արձանագրվել է միջին, խոշոր և փոքր կազմակերպություններում՝ համապատասխանաբար 106.9, 103.3 և 102.4 տոկոս, իսկ գերփոքր կազմակերպություններում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է միջին հանրապետական ցուցանիշի 57.8 տոկոսը(հավելված 1, աղյուսակ 28):

Կազմակերպությունների միջին ամսական անվանական աշխատավարձի չափի շրջանային կտրվածքով դիտարկումը վկայում է բոլոր շրջաններում դրա՝ միջին հանրապետական ցուցանիշից ցածր լինելու մասին, բացառությամբ Ասկերանի, Հաղրուքի, Մարտակերտի, Քաշաթաղի շրջանների, որտեղ այն կազմել է միջին հանրապետական ցուցանիշի, համապատասխանաբար, 108.4 տոկոսը, 106.1տոկոսը, 106.2 տոկոսը, 108.4տոկոսը:

Ըստ գործունեության տեսակների կազմակերպությունների միջին ամսական անվանական աշխատավարձի համեմատաբար բարձր մակարդակ հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է ֆինանսական գործունեության (միջին ամսական անվանական աշխատավարձի 300.4 տոկոսը), հանքագործական արդյունաբերությունում (միջին ամսական անվանական աշխատավարձի 201.5 տոկոսը), էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում(միջին ամսական անվանական աշխատավարձի 156.2 տոկոսը), շինարարությունում(միջին ամսական անվանական աշխատավարձի 134.0տոկոսը), անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալություն և սպառողներին ծառայությունների մատուցման (միջին ամսական անվանական աշխատավարձի 107.3տոկոսը), առավել ցածր մակարդակ դիտվել է կոմունալ, սննդատեսակների մատուցման (միջին ամսական անվանական աշխատավարձի 61.1 տոկոսը), առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային

արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման(միջին ամսական անվանական աշխատավարձի 58.0տոկոսը), առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցման (միջին ամսական անվանական աշխատավարձի 70.4 տոկոսը) ոլորտներում:

Գծապատկեր 31. Միջին ամսական աշխատավարձը ըստ գործունեության որոշ տեսակների (գործունեության տեսակի միջին հանրապետական ցուցանիշի նկատմամբ, տոկոսով)




6.5.2. Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները անհատ ձեռնարկատերերի մոտ

Հետազոտության արդյունքների ամփոփումը հնարավորություն է տվել գաղափար կազմել նաև աշխատանքի վարձատրության ֆոնդի մեծության և բաշխվածության մասին: Այսպես, 2011թ արդյունքներով անհատ ձեռնարկատերերի աշխատանքի վարձատրության ֆոնդի 82.2 տոկոսը բաժին է ընկել գերփոքր,14.7 տոկոսը՝ փոքր, իսկ 3.1 տոկոսը միջին անհատ ձեռնարկատերերին(հավելված 2, աղյուսակ 14):

2011թ գործող անհատ ձեռնարկատերերի աշխատանքի վարձատրության ֆոնդի բաշխումն շրջանային կտրվածքով արտացոլված է ստորև բերված գծապատկեր 32-ում:

Գծապատկեր 32. Գործող անհատ ձեռնարկատերերի աշխատանքի վարձատրության ֆոնդի բաշխումն շրջանային կտրվածքով (ընդհանուրի նկատմամբ, տոկոսով)




Միջին ամսական անվանական աշխատավարձի չափի դիտարկումը ըստ անհատ ձեռնարկատերերի չափերի հանրապետության մասշտաբով վկայում է դրանց ուղիղ

համեմատական կախվածության մասին. այսպես, միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է միջին հանրապետական ցուցանիշի 99.7 տոկոսը գերփոքր, 110.3 տոկոսը փոքր և 112.5 տոկոս միջին անհատ ձեռնարկատերերի մոտ(հավելված 2, աղյուսակ 15):

Անհատ ձեռնարկատերերի միջին ամսական անվանական աշխատավարձի չափի շրջանային կտրվածքով դիտարկումը վկայում է Ստեփանակերտի, Ասկերանի, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում դրա՝ միջին հանրապետական ցուցանիշից ցածր լինելու մասին (համապատասխանաբար 99,8 տոկոս, 98,5 տոկոս, 85,1 տոկոս և 85,8տոկոս):

Ըստ գործունեության տեսակների անհատ ձեռնարկատերերի միջին ամսական անվանական աշխատավարձի համեմատաբար բարձր մակարդակ հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է շինարարությունում, մշակող արդյունաբերությունում, տրանսպորտ և կապում, ձկնորսություն, ձկնաբուծությունում, հյուրանոցներ և ռեստորաններում, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցման և անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալություն և սպառողներին ծառայությունների մատուցման ոլորտներում, միջին հանրապետական ցուցանիշի, համապատասխանաբար, 243 տոկոսը, 121.9 տոկոսը, 112.3 տոկոսը, 111.4 տոկոսը,108.6 տոկոսը, 106.6 տոկոսը և 102.9 տոկոսը: Միջին հանրապետական ցուցանիշից առավել ցածր մակարդակ արձանագրվել է կոմունալ, անհատական ծառայությունների մատուցման ոլորտում՝ 84.4 տոկոս:

Գծապատկեր 33. Միջին ամսական աշխատավարձը ըստ գործունեության որոշ տեսակների (գործունեության տեսակի միջին հանրապետական ցուցանիշի նկատմամբ, տոկոսով)



6.6. Կազմակերպությունների բաշխումն ըստ մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների


Ըստ հետազոտության արդյունքների՝ գործող կազմակերպություններից 5-ը, որոնցից 4-ը գտնվում են Ստեփանակերտ քաղաքում, իսկ մեկը՝ Ասկերանի շրջանում, ունեն 27 մասնաճյուղեր և մեկ ներկայացուցչություն:

Գործող կազմակերպությունների մասնաճյուղերի համար, որպես գործունեության հիմնական տեսակ բնութագրական է եղել «տրանսպորտ ու կապ», «էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում» և «մշակող արդյունաբերություն» գործունեության տեսակները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 40.0-ական տոկոս և 20.0 տոկոս (հավելված 1, աղյուսակ 29, 30) :

Գործող կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բաշխումն ըստ գործունեության տեսակների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 34-ում:

Գծապատկեր 34. Գործող կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բաշխումն ըստ գործունեության տեսակների

Էլեկտրաէներգիայի,
գազի, ջրի
արտադրություն և
բաշխում
40.0%




6.7. Կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվությունը

6.7.1. Կազմակերպությունների ղեկավարների գեներացիան կառուցվածքը


Հետազոտության արդյունքները հնարավորություն են տվել դիտարկել կազմակերպությունների ղեկավարների սեռային կառուցվածքը, համաձայն որի կանայք կազմել են 21.9 տոկոսը, տղամարդիկ՝ 78.1 տոկոսը (հավելված 1, աղյուսակ 31, 32): Հանրապետության բոլոր շրջաններում տնօրենների մեծամասնությունը տղամարդիկ են: Շահումյանի շրջանում գործող բոլոր կազմակերպությունների տնօրենները տղամարդիկ են: Մարտունու շրջանում տղամարդկանց տեսակարար կշիռը կազմել է 87.1 տոկոս, Շուշիի շրջանում՝ 86.7 տոկոս, Ասկերանի շրջանում՝ 85.7 տոկոս, Քաշաթաղի շրջանում՝ 82.6 տոկոս, կանանց տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է Մարտակերտի շրջանում՝ 36.4 տոկոս:

Գծապատկեր 35. Գործող կազմակերպությունների տնօրենների բաշխումն ըստ սեռի՝ շրջաններով



Կին տնօրենների 52.6 տոկոսը ղեկավարում են առևտրի, 11.8 տոկոսը՝ շինարարության ոլորտներում գործող կազմակերպություններ: Ըստ գործունեության տեսակների կանանց ներկայացվածությունը տնօրենների կարգավիճակով բարձր է կրթության, ֆինանսական գործունեության, անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, վարձակալման և սպառողներին ծառայությունների մատուցման և առողջապահության ու սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտներում՝ կազմելով ընդամենի 42.9 տոկոսը, 40.0 տոկոսը, 30.0 տոկոսը և 36.4 տոկոսը:


Գծապատկեր 36. Գործող կազմակերպությունների տնօրենների բաշխումն ըստ սեռի և գործունեության տեսակների



6.7.2. Անհատ ձեռնարկատերերի գենդերային կառուցվածքը


Ըստ հետազոտության արդյունքների հաշվետու ժամանակաշրջանում տղամարդիկ կազմել են գործող անհատ ձեռնարկատերերի 57.9 տոկոսը, կանայք՝ 42.1 տոկոսը (հավելված 2, աղյուսակ 16, 17): Անհատ ձեռնարկատերերի սեռային կառուցվածքի դիտարկումը շրջաններով ցույց է տալիս, որ տղամարդկանց կշիռը գործող անհատ ձեռնարկատերերի կառուցվածքում գերազանցում է բոլոր շրջաններում, առավել ընդգծված՝ Մարտունու շրջանում՝ 62.9 տոկոս:

Գծապատկեր 37. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ սեռի՝ շրջաններով



Կին անհատ ձեռնարկատերերի 83.3 տոկոսը գործում է առևտրի, 5.7 տոկոսը՝ հյուրանոցների և ռեստորանների գործունեության և 4.7 տոկոսը՝ կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցման գործունեության ոլորտներում: Արական սեռի ներկայացուցիչների 68,9 տոկոսը ընդգրկված է առևտրի, 10,1 տոկոսը՝ տրանսպորտ և կապ, 6,1տոկոսը՝ մշակող արդյունաբերության, 5.8 տոկոսը՝ հյուրանոցներ և ռեստորաններ և 5,4 տոկոսը՝ կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցման բնագավառներում:

Գծապատկեր 38. Գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ սեռի և գործունեության տեսակների




6.8. Տնտեսավարող սուբյեկտների ապագա տնտեսական ծրագրերը

6.8.1. Կազմակերպությունների ապագա տնտեսական ծրագրերը

Հետազոտությանը մասնակցած գործող կազմակերպություններից 38-ը կամ 3.9 տոկոսը նախորդ տարվա համեմատ իր գործունեությունը ընդլայնելու, 39.2 տոկոսը կամ 377-ը՝ նույն ծավալով գործելու, իսկ 337-ը կամ 35.0 տոկոսը իր գործունեությունը սահմանափակելու ծրագրեր ունեն: Հետազոտության արդյունքներով 59 կազմակերպություն կամ 6.1 տոկոսը դժվարացել են պատասխանել «Նախորդ տարվա համեմատ ինչպիսի՞նն է Ձեր գործարար ծրագիրը» հարցին, իսկ 152-ը կամ 15.8 տոկոսը՝ չեն պատասխանել:


Գծապատկեր 39. Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց բաշխումն ըստ հետագա գործարար ծրագրի



Ըստ շրջանների այդ հարցին՝ Շահումյանի շրջանում հարցված իրավաբանական անձանց 33.3 տոկոսը, Մարտունու շրջանում՝ 22.6 տոկոսը պատասխանել են, որ նախորդ տարվա համեմատ մտադիր են ընդլայնել իրենց գործունեությունը, Հաղրուփի շրջանում՝

65.1տոկոսը, Մարտակերտի շրջանում՝ 43.6 տոկոսը, Ստեփանակերտում՝ 40.2տոկոսը, Շահումյանի շրջանում՝ 33.3 տոկոսը մտադիր են գործել նախորդ տարվա ծավալով: Ասկերանի և Քաշաթաղի շրջաններում հարցված իրավաբանական անձանց, համապատասխանաբար, 60.3տոկոսը և 56.5 տոկոսը իրենց գործունեությունը սահմանափակելու ծրագրեր ունեն:


Գծապատկեր 40. Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց բաշխումը ըստ հետագա գործարար ծրագրի՝ շրջաններով



Չնայած Շուշիի շրջանի հետազոտությանը մասնակցած իրավաբանական անձինք ընդհանուրի մեջ ունեցել են 3.1 տոկոս տեսակարար կշիռ, հարցաթերթի՝ իրենց հետագա գործարար ծրագրերի մասին հարցին պատասխանել դժվարացողներից նրանց մասնաբաժինը ավելի քան կրկնակի ավել էր՝ 6.8 տոկոս: Հարցին որևէ պատասխան չտվածների ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է Ստեփանակերտում՝ 18.3 տոկոս:


Ըստ հետազոտության տվյալների նախորդ տարվա համեմատ իրենց գործունեությունը ընդլայնելու մտադրություն ունեցող իրավաբանական անձանց 42.1 տոկոսի և 23.7 տոկոսի, նախորդ տարվա նույն ծավալով գործելու մտադրություն ունեցողների 40.1 տոկոսի և 26.8 տոկոսի, իրենց գործունեությունը սահմանափակելու մասին հայտարարածների՝ 45.1 տոկոսի և 15.7 տոկոսի գործունեության տեսակները եղել են, համապատասխանաբար, «առևտուր և ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների ու անձնական օգտագործման իրերի նորոգումը» և «շինարարությունը»: Այս գործունեության տեսակներին են դասվել նաև այդ հարցին «դժվարացել են պատասխանել» նշածների, համապատասխանաբար, 44.1 տոկոսը և 8.5 տոկոսը:

Գծապատկեր 41. Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց բաշխումն ըստ հետագա գործարար ծրագրի՝ ՏԳՏԴ բաժիններով



Իրավաբանական անձանց կին տնօրենների մեծամասնությունը՝ 38.8 տոկոսը և տղամարդ տնօրենների մեծամասնությունը՝ 39.2 տոկոսը, մտադիր են գործել նախորդ տարվա ծավալով:


Գծապատկեր 42. Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց տնօրենների բաշխումն ըստ իրականացրած գործարար ծրագրի և սեռի (ընդհանուրի նկատմամբ, տոկոսով)



6.8.2. Անհատ ձեռնարկատերերի ապագա տնտեսական ծրագրերը

Հետազոտությանը մասնակցած 2795 անհատ ձեռնարկատերերից 574-ը կամ 20,5 տոկոսը մտադիր է նախորդ տարվա համեմատ ընդլայնել իր գործունեությունը, 46,6 տոկոսը կամ 1302-ը՝ գործել նույն ծավալով, իսկ 284-ը կամ 10,2 տոկոսը սահմանափակել այն: Հետազոտության արդյունքներով 451-ը կամ 16,1 տոկոսը դժվարացել են պատասխանել «Նախորդ տարվա համեմատ ինչպիսի՞նն է Ձեր գործարար ծրագիրը» հարցին:


Գծապատկեր 43. Անհատ ձեռնարկատերերն ըստ հետագա գործարար ծրագրի



Մարտակերտի շրջանում հարցված անհատ ձեռնարկատերերի 37.8 տոկոսը, Հաղրուփի շրջանում՝ 33.3 տոկոսը մտադիր են նախորդ տարվա համեմատ ընդլայնել իրենց


գործունեությունը, Ասկերանի շրջանում՝ 80.4 տոկոսը, Շահումյանի շրջանում՝ 60.0 տոկոսը, Շուշիի շրջանում՝ 53.1 տոկոսը, Քաշաթաղի շրջանում՝ 43.8 տոկոսը, Ստեփանակերտում՝ 43.4 տոկոսը՝ գործել նախորդ տարվա ծավալով:

Գծապատկեր 44. Հետազոտությանը ընդգրկված գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ հետագա գործարար ծրագրի՝ շրջաններով




Ըստ հետազոտության արդյունքների նախորդ տարվա համեմատ իրենց գործունեությունը ընդլայնելու մտադրություն ունեցող անհատ ձեռնարկատերերի 77.9 տոկոսի, նախորդ տարվա նույն ծավալով գործելու մտադրություն ունեցողների 78.5 տոկոսի, իրենց գործունեությունը սահմանափակողների՝ 64.1 տոկոսի գործունեության տեսակը եղել է «առևտուր և ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների ու անձնական օգտագործման իրերի նորոգումը»: Այդ գործունեության տեսակին են դասվել նաև այդ հարցին պատասխանել դժվարացողների 71.8 տոկոսը:

Գծապատկեր 45. Հետազոտությանը ընդգրկված գործող անհատ ձեռնարկատերերի բաշխումը ըստ հետագա գործարար ծրագրի՝ ՏԳՏԴ բաժիններով, %



Անհատ ձեռնարկատերերի ըստ հետագա գործարար ծրագրերի բաշխվածությունը սեռերով գրեթե նույնական է: Եվ տղամարդկանց, և կանանց մեծամասնությունը, համապատասխանաբար, 48.1 տոկոսը և 45.5 տոկոսը մտադիր են գործել նախորդ տարվա նույն ծավալով, տեսակարար կշռով դրան հաջորդել է գործունեությունը ընդլայնելու մտադրություն ունեցողները, համապատասխանաբար, 19.3 տոկոսը և 22.2 տոկոսը:

Գծապատկեր 46. Հետազոտությանը ընդգրկված գործող անհատ ձեռնարկատերերի տնօրենների բաշխումն ըստ իրականացրած գործարար ծրագրի (ընդհանուրի նկատմամբ, տոկոսով)




6.9. Տնտեսական գործունեության զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրները

6.9.1. Կազմակերպությունների տնտեսական գործունեության զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրները

Բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրների վերաբերյալ հարցին գործող իրավաբանական անձանց 60.8 տոկոսը կամ 586-ը պատասխանել են, որ իրենց բիզնեսի զարգացմանը ոչինչ չի խանգարում: Որպես բիզնեսի զարգացմանը խոչընդոտող առաջնահերթ խնդիր հետազոտված իրավաբանական անձինք կարևորել են անհավասար մրցակցությունը և ֆինանսական վիճակը, համապատասխանաբար, 10.2 տոկոսը և 4.3 տոկոսը, բնակչության անվճարունակությունը՝ 2.2 տոկոսը, այլ տնտեսական պայմանները՝ 7.6 տոկոսը:

Գծապատկեր 47. Իրավաբանական անձանց բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրները, %



Ըստ շրջանների ֆինանսական վիճակը որպես բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոն առավել հաճախ նշվել է Քաշաթաղի (30.4 տոկոսը) շրջանում գործող իրավաբանական անձանց կողմից: Մարտակերտի շրջանում հարցված իրավաբանական անձանց 5.5 տոկոսի բիզնեսի զարգացմանը խանգարում է անհավասար մրցակցությունը, 12.7 տոկոսին՝ բնակչության անվճարունակությունը, 7.3 տոկոսին՝ այլ տնտեսական պայմանները: Ստեփանակերտում, Մարտունու ու Շահումյանի շրջաններում հարցվածների, համապատասխանաբար, 10.0 տոկոսը, 30.6 տոկոսը և 66.7 տոկոսը իրենց բիզնեսի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոն համարել են անհավասար մրցակցությունը: Բոլոր շրջաններում(բացի Շահումյանի շրջանից) հարցված իրավաբանական անձանց մեծամասնությունը՝ 32.3 տոկոսից մինչև 79.9 տոկոսը, իրենց բիզնեսի զարգացմանը խանգարող որևէ խնդիր չի նշել:

Աղյուսակ 6.


Իրավաբանական անձանց բիզնեսի զարգացմանը խանգարող խնդիրներն ըստ առաջնահերթության, շրջաններով, %

	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղբուռ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Ընդամենը որից՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Բնակչության անվճարունակությունը	2.2	1.2		11.6	12.7	1.6			
Անհավասար մրցակցությունը	10.2	10.1	4.8	4.7	5.5	30.6	66.7		
Ֆինանսական վիճակը	4.3	2.3	4.8		1.8	21.0		3.3	30.4
Խանգարող խնդիրներ չկան	60.8	62.0	79.3	46.5	67.2	32.3	33.3	79.9	43.5
Այլ տնտեսական պայմաններ	7.6	9.1		4.6	7.3	1.6		6.7	8.7
Դժվարանում են պատասխանել	3.1	3.9	1.6	2.3				3.3	

	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղբուք	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Պատասխան չի տրվել	11.8	11.4	9.5	30.3	5.5	12.9		6.8	17.4

Իրավաբանական անձանց և կին, և տղամարդ տնօրենների մեծամասնությունը (համապատասխանաբար 65.4 տոկոսը և 59.6 տոկոսը) իր բիզնեսի զարգացմանը խոչընդոտող որևէ խնդիր չի մատնանշել: Իրենց բիզնեսի զարգացումը խոչընդոտող խնդիրների շարքում կանայք ավելի հաճախ նշել են այլ խնդիրները՝ 9.5 տոկոսը, տղամարդիկ՝ անհավասար մրցակցությունը՝ 10.6 տոկոսը:


Գծապատկեր 48. Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց տնօրենների բաշխումն ըստ բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրների, %



6.9.2. Անհատ ձեռնարկատերերի տնտեսական գործունեության զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրները

Բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրների վերաբերյալ հարցին անհատ ձեռնարկատերերի 59.1 տոկոսը կամ 1651-ը պատասխանել են, որ իրենց բիզնեսի զարգացմանը ոչինչ չի խանգարում: Որպես բիզնեսի զարգացմանը խոչընդոտող առաջնահերթ խնդիր հետազոտված անհատ ձեռնարկատերերը կարևորել են ֆինանսական վիճակը՝ 12.1տոկոսը, անհավասար մրցակցությունը՝ 11.0 տոկոսը, բնակչության անվճարունակությունը՝ 4.0 տոկոսը:

Գծապատկեր 49. Անհատ ձեռնարկատերերի բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրները, %



Ըստ շրջանների բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոնների բնութագրերը տարբեր են: Այսպես. ֆինանսական վիճակը որպես խոչընդոտ առավել հաճախ նշվել է Շահումյանի (31.1 տոկոսը), Մարտունու (28.0 տոկոսը), Ասկերանի (20.7 տոկոսը), Մարտակերտի (15.7 տոկոսը) շրջանների անհատ ձեռնարկատերերի կողմից: Անհավասար մրցակցությունը որպես խոչընդոտ նշվել է Ստեփանակերտի (13.3 տոկոսը) և Մարտունու(19.5 տոկոսը) շրջանում հետազոտված անհատ ձեռնարկատերերի կողմից: Ստեփանակերտ քաղաքում և բոլոր շրջաններում(բացի Շահումյանի շրջանից) հետազոտված անհատ ձեռնարկատերերի մեծամասնությունը (36.5

տոկոսից մինչև 68.7 տոկոս) նշել են, որ իրենց բիզնեսի զարգացմանը խոչընդոտող խնդիրներ չկան:


Աղյուսակ 7.

Հետազոտությանը ընդգրկված գործող անհատ ձեռնարկատերերի բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրները շրջաններով (տոկոսներով շրջանի ընդամենի նկատմամբ)

	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղարթ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Ընդամենը որից՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Բնակչության անվճարունակությունը	4.0	0.8	4.8	4.7	14.7	3.6	28.9	1.2	4.1
Անհավասար մրցակցությունը	11.0	13.3	1.5	4.7	9.6	19.5	2.2	3.7	1.7
Ֆինանսական վիճակը	12.1	5.6	20.7	10.4	15.7	28.0	31.1	12.4	7.4
Այլ տնտեսական պայմաններ	5.5	5.9	5.6	3.6	2.9	6.9	4.4	1.2	8.3
Խանգարող խնդիրներ չկան	59.1	68.7	62.6	56.8	50.6	36.5	15.6	69.1	41.3
Գծվարանում են պատասխանել	5.8	3.8	4.8	10.9	4.2	1.9	8.9	9.9	35.5
Չեն պատասխանել	2.5	1.9	0.0	8.9	2.3	3.6	8.9	2.5	1.7

Իրենց բիզնեսի զարգացմանը խոչընդոտող խնդիր չունեին տղամարդ անհատ ձեռնարկատերերի 63.0 տոկոսը, կին անհատ ձեռնարկատերերի 53.7 տոկոսը, շուրջ 167 տղամարդ և 172 կին անհատ ձեռնարկատեր իրենց բիզնեսի զարգացմանը խոչընդոտող խնդիր է համարել ֆինանսական վիճակը, համապատասխանաբար, 159-ը և 148-ը՝ անհավասար մրցակցությունը: Հետազոտության արդյունքները վկայում են, որ թղթաբանությունը առավել անհաճո է տղամարդկանց:

Գծապատկեր 50. Հետազոտությանը ընդգրկված գործող անհատ ձեռնարկատերերի տնօրենների բաշխումն ըստ բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրների



6.10. Տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները այլ մարմինների կամ երրորդ անձանց տրամադրումը


6.10.1 Իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները այլ մարմինների կամ երրորդ անձանց տրամադրումը

Սույն հետազոտությանը իրենց վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները այլ մարմինների կամ երրորդ անձանց հարցման դեպքում տրամադրմանը համաձայնություն տվել է հարցմանը մասնակցած գործող կազմակերպությունների 20.1 տոկոսը: Իրենց վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները այլ մարմինների կամ երրորդ անձանց հարցման դեպքում տրամադրմանը համաձայնություն տվել են Ստեփանակերտ քաղաքում գործող կազմակերպությունների 13.2 տոկոսը, Ասկերանի շրջանում՝ 28.6 տոկոսը,

Մարտակերտի շրջանում՝ 16.4 տոկոսը, Մարտունու շրջանում՝ 74.2 տոկոսը, Շուշի շրջանում՝ 60.0 տոկոսը, Քաշաթաղի շրջանում՝ 56.5 տոկոսը: Իրենց լրիվ անվանման մասին տեղեկությունները այլ անձանց տրամադրել համաձայնվել են Քաշաթաղի և Ասկերանի շրջաններում գործող իրավաբանական անձանց, համապատասխանաբար՝ 30.4 տոկոսը և 11.1 տոկոսը:

Հաղործի և Շահումյանի շրջաններում գործող կազմակերպություններից ոչ մեկը իրենց վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները այլ մարմինների կամ երրորդ անձանց հարցման դեպքում տրամադրմանը համաձայնություն չի տվել:

Գծապատկեր 51. Իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները այլ մարմինների կամ երրորդ անձանց տրամադրման համաձայնությունը ըստ շրջանների, %




6.10.2. Անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալները այլ մարմինների կամ երրորդ անձանց տրամադրման համաձայնությունը

Այլ մարմինների կամ երրորդ անձանց բոլոր տվյալները տրամադրման իրենց համաձայնությունն են տվել հետազոտված անհատ ձեռնարկատերերի 23.8 տոկոսը, ընդ որում՝ Մարտունու շրջանում՝ 49.7 տոկոսը և Ստեփանակերտ քաղաքում՝ 33.4 տոկոսը: Իրենց գտնվելու վայրի մասին տեղեկություններ ներկայացնել համաձայնվել են Ասկերանի (92.6 տոկոս) և Քաշաթաղի (86.0 տոկոս) շրջանների անհատ ձեռնարկատերերի մեծամասնությունը: Գործունեության տեսակի և հասույթի վերաբերյալ տվյալների տրամադրմանը համաձայն են Մարտակերտի շրջանում հետազոտված անհատ ձեռնարկատերերի, համապատասխանաբար, 34.6 տոկոսը և 33.7 տոկոսը:

Համաձայն չեն իրենց տվյալները այլ մարմինների կամ երրորդ անձանց տրամադրման Շահումյանի շրջանի հետազոտված անհատ ձեռնարկատերերը, իսկ Հաղործի շրջանի հետազոտված անհատ ձեռնարկատերերի 4.7 տոկոսը և Շուշիի շրջանի՝ 18.5 տոկոսը համաձայնվել են տվյալներ տրամադրել միայն գտնվելու վայրի մասին:

Գծապատկեր 52. Անհատ ձեռնարկատերերի տվյալները այլ մարմինների կամ երրորդ անձանց տրամադրման համաձայնությունը, %



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բիզնես ռեգիստրի հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Հետազոտությամբ ընդգրկվել են 3173 իրավաբանական անձինք և 5431 անհատ ձեռնարկատերեր: Ստեփանակերտ քաղաքին բաժին է ընկնում հանրապետությունում գրանցված կազմակերպությունների 65.0 տոկոսը և անհատ ձեռնարկատերերի 49.7 տոկոսը, գործող կազմակերպությունների 71.0 տոկոսը և անհատ ձեռնարկատերերի 50.4 տոկոսը, չգործող կազմակերպությունների 57.0 տոկոսը և անհատ ձեռնարկատերերի 46.8 տոկոսը, չհայտնաբերված կազմակերպությունների 81.8 տոկոսը և անհատ ձեռնարկատերերի 83.8 տոկոսը, հրաժարված անհատ ձեռնարկատերերը լրիվությամբ:

2. Հետազոտությամբ ստացված արդյունքների համաձայն՝ հարցման ժամանակաընթացքում գործել է կազմակերպությունների ընդամենի 30.4%-ը, չի գործել 54.1%-ը, չի հայտնաբերվել՝ 15.5%-ը: Գործող անհատ ձեռնարկատերերը կազմել են ընդամենի 51.5%-ը, չգործողները՝ 45.7%-ը, իսկ չհայտնաբերվածները՝ 2.6%-ը, հրաժարվել են ընդամենի 0.2%-ը:

3. Հետազոտությամբ պարզվել է, որ գերփոքր են եղել գործող կազմակերպությունների 56.4 տոկոսը, փոքր՝ 31.0 տոկոսը: Միջին և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 4.9 տոկոս և 7.7 տոկոս: Գերփոքր են եղել գործող անհատ ձեռնարկատերերի 99.0 տոկոսը, փոքր՝ 0.9 տոկոսը և միջին՝ 0.1 տոկոսը:

4. Ըստ 2011թ. ընթացքում գործելու տևողության որոշվող չափերի՝ հետազոտությամբ պարզվել է, որ գործող կազմակերպությունների 81.9 տոկոսը գործել են 9 ամսից ավելի, 7.1 տոկոսը՝ 6-9 ամիս, 5.9 տոկոսը՝ 3-6 ամիս և 5.1 տոկոսը՝ մինչև 3 ամիս ժամկետով, անհատ ձեռնարկատերերի 9.9 տոկոսը գործել է մինչև 3 ամիս, 9.2 տոկոսը՝ 3-6 ամիս, 9.7 տոկոսը՝ 6-9 ամիս, իսկ 71.2 տոկոսը՝ 9 ամսից ավել ժամկետով:

5. Իրենց վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները այլ մարմինների կամ երրորդ անձանց հարցման դեպքում տրամադրմանը համաձայնություն տվել է հարցմանը

մասնակցած գործող կազմակերպությունների 20.1 տոկոսը, անհատ ձեռնարկատերերի՝ 23.8 տոկոսը:

6. Հետազոտության արդյունքների համաձայն, գործող կազմակերպությունների գերակշիռ մեծամասնության համար կազմակերպական-իրավական ձև է հանդիսացել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 73.3 տոկոսը: Բաժնետիրական ընկերությունների (փակ և բաց) տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 19.3 տոկոսը: Ընդ որում, փակ բաժնետիրական ընկերությունները կազմել են բաժնետիրական ընկերությունների ընդամենի 97.8 տոկոսը: Ինչ վերաբերում է կազմակերպական-իրավական այլ ձևերին, ապա դրանք են՝ արտադրական կոոպերատիվներ և պետական ձեռնարկություններ, որոնց տեսակարար կշիռը հանրագումարով կազմել են ընդամենի 7.4 տոկոսը:

7. Գործող կազմակերպությունների 20.8%-ը և անհատ ձեռնարկատերերի 4.0 %-ը զբաղվել է գործունեության երկու և ավելի տեսակով:

8. Գործող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որպես գործունեության հիմնական տեսակ, ընդհանուր առմամբ, բնութագրական է եղել առևտուրը (66.2%), ծառայությունները (20.7%) և արդյունաբերությունը (7.1%), համապատասխանաբար՝ 40.6%, 23.6% և 13.3% կազմակերպությունների համար և 75.0%, 19.7% և 4.9% անհատ ձեռնարկատերերի համար:

9. Գործող կազմակերպությունների կողմից 2011թ. ընթացքում արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթը կազմել է 152430.3 մլն դրամ, որի 27.3 տոկոսը կամ 41697.9 մլն դրամը ձևավորվել է արդյունաբերության, 21.7 տոկոսը կամ 33007.6 մլն դրամ՝ շինարարության, 39.9 տոկոսը կամ մոտ 60781.1 մլն դրամը՝ առևտրի, 10.5 տոկոսը կամ մոտ 16069.1 մլն դրամը՝ ծառայությունների ոլորտում: Հասույթի ձևավորման կառուցվածքում գերակայող են եղել խոշոր կազմակերպությունները, որոնց գործունեության արդյունքում ձևավորված հասույթը կազմել է ընդամենի 50.0 տոկոսը (կամ մոտ 76204.8 մլն դրամ): Տեսակարար կշռով խոշոր կազմակերպությունների կողմից ձևավորված հասույթի ցուցանիշին հաջորդել են փոքր կազմակերպությունները, որոնց գործունեության արդյունքում ձևավորված հասույթի ցուցանիշը 2011թ. կազմել է ընդամենի 22.6 տոկոսը կամ մոտ 34481.4 մլն դրամ:

10. Անհատ ձեռնարկատերերի կողմից 2011թ. արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթը կազմել է մոտ 24818.2 մլն դրամ, որի 87.71 տոկոսը կամ 21768.6 մլն դրամը ձևավորվել է առևտրի, 8.1 տոկոսը կամ մոտ 2010.1 մլն դրամը արդյունաբերության ոլորտներում, 3.53 տոկոսը կամ մոտ 877.0 մլն դրամը ծառայությունների ոլորտում: Գործող անհատ ձեռնարկատերերի կողմից ձևավորված հասույթի կառուցվածքում գերփոքր անհատ ձեռնարկատերերի գործունեության արդյունքում ձևավորված հասույթը կազմել է ընդամենի 85.0 %-ը:

11. Աշխատանքի վարձատրության ֆոնդի 69.7 տոկոսը բաժին է ընկել խոշոր, 18.2 տոկոսը՝ փոքր, 7.7 տոկոսը՝ միջին և 4.4 տոկոսը գերփոքր կազմակերպություններին: Միջին ամսական անվանական աշխատավարձի չափի ըստ կազմակերպությունների չափերի դիտարկմամբ պարզվում է, որ միջին ամսական աշխատավարձի մակարդակից բարձր ցուցանիշ արձանագրվել է փոքր, միջին և խոշոր կազմակերպություններում՝ համապատասխանաբար 102.4, 106.9 և 103.3 տոկոս, իսկ գերփոքր կազմակերպություններում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է միջին հանրապետական ցուցանիշի 57.8 տոկոսը:

Կազմակերպությունների միջին ամսական անվանական աշխատավարձի չափի

շրջանային կտրվածքով դիտարկումը վկայում է բոլոր շրջաններում դրա՝ միջին հանրապետական ցուցանիշից ցածր լինելու մասին, բացառությամբ Ասկերանի, Հաղարծի, Մարտակերտի, Քաշաթաղի շրջանների, որտեղ այն կազմել է միջին հանրապետական ցուցանիշի, համապատասխանաբար, 108.4 տոկոսը, 106.1տոկոսը, 106.2 տոկոսը, 108.4տոկոսը:

12. Աշխատանքի վարձատրության ֆոնդի 82.2 տոկոսը բաժին է ընկել գերփոքր, 14.7 տոկոսը՝ փոքր և 3.1 տոկոսը՝ միջին անհատ ձեռնարկատերերին: Միջին ամսական անվանական աշխատավարձի չափի դիտարկումը ըստ անհատ ձեռնարկատերերի չափերի հանրապետության մասշտաբով վկայում է դրանց ուղիղ համեմատական կախվածության մասին. այսպես, միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է միջին հանրապետական ցուցանիշի 99.7 տոկոսը գերփոքր, 110.3 տոկոսը փոքր և 112.5 տոկոս միջին անհատ ձեռնարկատերերի մոտ:

Անհատ ձեռնարկատերերի միջին ամսական անվանական աշխատավարձի չափի շրջանային կտրվածքով դիտարկումը վկայում է Ստեփանակերտի, Ասկերանի, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում դրա՝ միջին հանրապետական ցուցանիշից ցածր լինելու մասին (համապատասխանաբար 99,8 տոկոս, 98,5 տոկոս, 85,1 տոկոս և 85,8տոկոս):

13. Ըստ հետազոտության արդյունքների՝ գործող կազմակերպություններից 5-ը ունեն 27 մասնաճյուղեր և մեկ ներկայացուցչություն:

14. Կազմակերպությունների ղեկավարների սեռային կառուցվածքի դիտարկումը խոսում է կանանց ներկայացվածության ցածր մակարդակի մասին. կանայք կազմել են 21.9 տոկոսը, տղամարդիկ՝ 78.1 տոկոսը: Կին տնօրենների 52.6 տոկոսը ղեկավարում են առևտրի, 11.8 տոկոսը՝ շինարարության ոլորտներում գործող կազմակերպություններ:

15. Ըստ հետազոտության արդյունքների հաշվետու ժամանակաշրջանում տղամարդիկ կազմել են գործող անհատ ձեռնարկատերերի 57.9 տոկոսը, կանայք՝ 42.1 տոկոսը: Կին անհատ ձեռնարկատերերի 83.3 տոկոսը գործում է առևտրի, 5.7 տոկոսը՝ հյուրանոցների և ռեստորանների գործունեության ու 4.7 տոկոսը՝ կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցման ոլորտներում:

16. Գործող կազմակերպություններից 38-ը կամ 3.9 տոկոսը նախորդ տարվա համեմատ գործունեությունը ընդլայնելու, 39.2 տոկոսը կամ 377-ը՝ նույն ծավալով գործելու, իսկ 337-ը կամ 35.0 տոկոսը իր գործունեությունը սահմանափակելու ծրագրեր ունեն: Հետազոտության արդյունքներով 59 կազմակերպություն կամ 6.1 տոկոսը դժվարացել են պատասխանել «Նախորդ տարվա համեմատ ինչպիսի՞նն է Ձեր գործարար ծրագիրը» հարցին, իսկ 152-ը կամ 15.8 տոկոսը՝ չեն պատասխանել:

17. Անհատ ձեռնարկատերերից 574-ը կամ 20.5 տոկոսը նախորդ տարվա համեմատ մտադիր է ընդլայնել իր գործունեությունը, 46.6 տոկոսը կամ 1302-ը՝ գործել նույն ծավալով, իսկ 284-ը կամ 10.2 տոկոսը սահմանափակել իր գործունեությունը: Հետազոտության արդյունքներով 451-ը կամ 16.1 տոկոսը դժվարացել են պատասխանել «Նախորդ տարվա համեմատ ինչպիսի՞նն է Ձեր գործարար ծրագիրը» հարցին, իսկ 184-ը կամ 6.6 տոկոսը՝ չեն պատասխանել:

18. Բիզնեսի զարգացմանը խանգարող առաջնահերթ խնդիրների վերաբերյալ հարցին գործող իրավաբանական անձանց 60.8 տոկոսը կամ 586-ը պատասխանել են, որ իրենց բիզնեսի զարգացմանը ոչինչ չի խանգարում: Որպես բիզնեսի զարգացմանը խոչընդոտող առաջնահերթ խնդիր հետազոտված իրավաբանական անձինք կարևորել են անհավասար մրցակցությունը և ֆինանսական վիճակը, համապատասխանաբար, 10.2 տոկոսը և 4.3 տոկոսը, բնակչության անվճարունակությունը՝ 2.2 տոկոսը, այլ տնտեսական

պայմանները՝ 7.6 տոկոսը: Անհատ ձեռնարկատերերի 59.1 տոկոսը կամ 1651-ը պատասխանել են, որ իրենց բիզնեսի զարգացմանը ոչինչ չի խանգարում: Որպես բիզնեսի զարգացմանը խոչընդոտող առաջնահերթ խնդիր հետազոտված անհատ ձեռնարկատերերը կարևորել են ֆինանսական վիճակը՝ 12.1 տոկոսը, անհավասար մրցակցությունը՝ 11.0 տոկոսը, բնակչության անվճարունակությունը՝ 4.0 տոկոսը:

*

*

*

Հետազոտության արդյունքները ԼՂՀ ԱՎԾ-ին հնարավորություն տվեցին.

- համալրել ԼՂՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրի տվյալների բազան նոր կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ համապատասխան տվյալներով,
- **բիզնես-ռեգիստրի տվյալների բազայի ընդլայնմանը զուգընթաց՝ բազմազանել վիճակագրությունում դիտարկումների ընտրանքային եղանակների կիրառման շրջանակները,**
- տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության տեսակները կողավորել համաձայն ՏԳՏԳ-ի, ինչը ստացված արդյունքները համադրելի է դարձնում ՀՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրում առկա՝ արդեն իսկ ՏԳՏԳ հիման վրա կողավորված այլ բազաների հետ,
- վարել կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ժողովրդագրություն,
- բացահայտել տնտեսավարող սուբյեկտների գործարար ակտիվությունը սահմանափակող առաջնահերթ խնդիրները:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ց 1

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Հետազոտությանը ընդգրկված իրավաբանական անձանց բաշխումն ըստ գործելու, չգործելու և չհայտնաբերելու հանգամանքի՝ շրջանային կտրվածքով

Շրջանները	Ընդամենը	Գործել են	Չեն գործել	Չեն հայտնաբերվել
Ընդամենը	3173	963	1717	493
Ստեփանակերտ	2062	684	978	400
Ասկերան	169	63	104	2
Հաղրուք	148	43	105	
Մարտակերտ	192	55	132	5
Մարտունի	286	62	219	5
Շահումյան	18	3	15	
Շուշի	122	30	84	8
Քաշաթաղ	176	23	80	73

Հետազոտությանը ընդգրկված իրավաբանական անձանց բաշխումն ըստ գործելու, չգործելու և չհայտնաբերելու հանգամանքի՝ շրջանային կտրվածքով (տոկոսով՝ ընդամենի նկատմամբ)

Շրջանները	Ընդամենը	Գործել են	Չեն գործել	Չեն հայտնաբերվել
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Ստեփանակերտ	65.0	71.0	57.0	81.1
Ասկերան	5.3	6.5	6.1	0.4
Հաղրուք	4.7	4.5	6.1	
Մարտակերտ	6.1	5.7	7.7	1.0
Մարտունի	9.0	6.5	12.7	1.0
Շահումյան	0.6	0.3	0.9	
Շուշի	3.8	3.1	4.9	1.7
Քաշաթաղ	5.5	2.4	4.6	14.8

Հետազոտությանը ընդգրկված իրավաբանական անձանց բաշխումն ըստ գործելու, չգործելու և չհայտնաբերելու հանգամանքի՝ շրջանային կտրվածքով (տոկոսով՝ շրջանի ընդամենի նկատմամբ)

Շրջանները	Ընդամենը	Գործել են	Չեն գործել	Չեն հայտնաբերվել
Ընդամենը	100.0	30.4	54.1	15.5
Ստեփանակերտ	100.0	33.2	47.4	19.4
Ասկերան	100.0	37.3	61.5	1.2
Հաղրուք	100.0	29.0	71.0	
Մարտակերտ	100.0	28.6	68.8	2.6
Մարտունի	100.0	21.7	76.6	1.7
Շահումյան	100.0	16.7	83.3	
Շուշի	100.0	24.6	68.8	6.6
Քաշաթաղ	100.0	13.1	45.4	41.5

Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց բաշխումն ըստ գրանցման վայրի և գործունեության իրականացման վայրի տարբերությունների

Գրանցման վայրը	Ընդամենը	Գործունեության իրականացման վայրը								
		Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրուք	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ	ք.Երևան
Ընդամենը	296	224	17	4	21	7	0	3	9	11
Ստեփանակերտ	254	216	11	1	9	3		2	2	10
Ասկերան	9	3	6							
Հաղրուք	8	4		3						1
Մարտակերտ	12				12					
Մարտունի	5	1				4				
Շահումյան	0									
Շուշի	1							1		
Քաշաթաղ	7								7	

Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց բաշխումն ըստ գրանցման վայրի և գործունեության իրականացման վայրի տարբերությունների (տոկոսով՝ շրջանի ընդամենի նկատմամբ)

Գրանցման վայրը	Ընդամենը	Գործունեության իրականացման վայրը								
		Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրուք	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ	ք.Երևան
Ընդամենը	100.0	75.7	5.7	1.4	7.1	2.4		1.0	3.0	3.7
Ստեփանակերտ	100.0	85.0	4.3	0.4	3.6	1.2		0.8	0.8	3.9
Ասկերան	100.0	33.3	66.7							
Հաղրուք	100.0	50.0		37.5						12.5
Մարտակերտ	100.0				100.0					
Մարտունի	100.0	20.0				80.0				
Շահումյան										
Շուշի	100.0							100.0		
Քաշաթաղ	100.0								100.0	

Հետազոտությանը ընդգրկված գործող իրավաբանական անձանց բաշխումն ըստ ՏԳՏԴ բաժինների և ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի բաժնի անվանումը	Իրավաբանական անձանց քանակը	Տոկոսով՝ տվյալ գործունեության տեսակի ընդամենի նկատմամբ	Տոկոսով՝ ընդամենի նկատմամբ
Ընդամենը	963	x	100.0
այդ թվում՝			
գերվորդ	543	x	100.0
վորդ	299	x	100.0

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի բաժնի անվանումը	Իրավաբանական անձանց քանակը	Տոկոսով՝ տվյալ գործունեության տեսակի ընդամենի նկատմամբ	Տոկոսով՝ ընդամենի նկատմամբ
միջին	47	x	100.0
խոշոր	74	x	100.0
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն (բաժին A)			
Ընդամենը	21	100.0	2.2
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	9	42.8	1.6
փոքր՝ 6-50 աշխատողներ	10	47.6	3.3
միջին՝ 51-100 աշխատողներ	1	4.8	2.1
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	1	4.8	1.4
Չկնրություն, ձկնաբուծություն (բաժին B)			
Ընդամենը	1	100.0	0.1
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	1	100.0	0.2
Հանրագործական արդյունաբերություն (բաժին C)			
Ընդամենը	7	100.0	0.7
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	5	71.4	0.9
փոքր՝ 6-50 աշխատողներ	1	14.3	0.3
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	1	14.3	1.4
Մշակող արդյունաբերություն (բաժին D)			
Ընդամենը	111	100.0	11.5
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	53	47.8	9.8
փոքր՝ 6-50 աշխատողներ	51	45.9	17.1
միջին՝ 51-100 աշխատողներ	3	2.7	6.4
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	4	3.6	5.4
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում (բաժին E)			
Ընդամենը	10	100.0	1.0
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	1	10.0	0.2
փոքր՝ 6-50 աշխատողներ	2	20.0	0.7
միջին՝ 51-100 աշխատողներ	2	20.0	4.2
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	5	50.0	6.7
Շինարարություն (բաժին F)			
Ընդամենը	195	100.0	20.3
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	82	42.1	15.1
փոքր՝ 6-25 աշխատողներ	82	42.1	27.4
միջին՝ 26-50 աշխատողներ	11	5.6	23.4
խոշոր՝ 50-ից ավել աշխատողներ	20	10.2	27.0
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անճնական օգտագործման իրերի նորոգում (բաժին G)			
Ընդամենը	391	100.0	40.6
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	273	69.8	50.3
փոքր՝ 6-15 աշխատողներ	92	23.5	30.8
միջին՝ 16-30 աշխատողներ	18	4.6	38.3
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	8	2.1	10.8
Ծառայություններ (բաժիններ H+I+J+K+L+M+N+O)			
Ընդամենը	227	100.0	23.6
այդ թվում՝ 24.5			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	119	52.4	21.9
փոքր՝ 6-15 աշխատողներ	61	26.9	20.4
միջին՝ 16-30 աշխատողներ	12	5.3	25.6
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	35	15.4	47.3

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի բաժնի անվանումը	Իրավաբանական անձանց քանակը	Տոկոսով՝ տվյալ գործունեության տեսակի ընդամենի նկատմամբ	Տոկոսով՝ ընդամենի նկատմամբ
Հյուրանոցներ և ռեստորաններ (բաժին H)			
Ընդամենը	47	100.0	4.9
այդ թվում՝ 5.7			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	31	66.0	5.7
փոքր՝ 6-15 աշխատողներ	11	23.4	3.7
միջին՝ 16-30 աշխատողներ	4	8.5	8.5
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	1	2.1	1.3
Տրանսպորտ և կապ (բաժին I)			
Ընդամենը	51	100.0	5.3
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	18	35.3	3.3
փոքր՝ 6-15 աշխատողներ	20	39.2	6.7
միջին՝ 16-30 աշխատողներ	4	7.8	8.5
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	9	17.7	12.2
Տրանսպորտ՝ 60+63 հատված			
Ընդամենը	36	100.0	3.7
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	11	30.6	2.0
փոքր՝ 6-15 աշխատողներ	16	44.4	5.4
միջին՝ 16-30 աշխատողներ	4	11.1	8.5
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	5	13.9	6.8
Կապ՝ 64 հատված			
Ընդամենը	15	100.0	1.6
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	7	46.6	1.3
փոքր՝ 6-15 աշխատողներ	4	26.7	1.3
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	4	26.7	5.4
Ֆինանսական գործունեություն (բաժին J)			
Ընդամենը	10	100.0	1.0
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	10	100.0	1.8
Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալություն և սպասողներին ծառայությունների մատուցում (բաժին K)			
Ընդամենը	50	100.0	5.2
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	43	86.0	7.9
փոքր՝ 6-15 աշխատողներ	5	10.0	1.7
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	2	4.0	2.7
Պետական կառավարում (բաժին L)			
Ընդամենը	3	100.0	0.3
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	1	33.3	0.2
փոքր՝ 6-15 աշխատողներ	1	33.3	0.3
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	1	33.3	1.3
Կրթություն (բաժին M)			
Ընդամենը	7	100.0	0.7
այդ թվում՝ 0.2			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	2	28.6	0.4
փոքր՝ 6-15 աշխատողներ	3	42.8	1.0
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	2	28.6	2.7
Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում (բաժին N)			
Ընդամենը	22	100.0	2.3
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	2	9.1	0.4
փոքր՝ 6-15 աշխատողներ	3	13.6	1.0

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի բաժնի անվանումը	Իրավաբանական անձանց քանակը	Տոկոսով՝ տվյալ գործունեության տեսակի ընդամենի նկատմամբ	Տոկոսով՝ ընդամենի նկատմամբ
միջին՝ 16-30 աշխատողներ	2	9.1	4.3
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	15	68.2	20.3
Կոմունալ, անհատական և այլ ծառայությունների մատուցում (բաժին O)			
Ընդամենը	37	100.0	3.9
այդ թվում՝			
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	12	32.4	2.2
փոքր՝ 6-15 աշխատողներ	18	48.7	6.0
միջին՝ 16-30 աշխատողներ	2	5.4	4.3
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	5	13.5	6.8

Աղյուսակ 7

Հետազոտությամբ ընդգրկված գործող իրավաբանական անձանց բաշխումն ըստ ՏԳՏԴ բաժինների և ըստ աշխատողների թվաքանակի չափորոշիչի՝ շրջանային կտրվածքով

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի բաժնի անվանումը	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղարթ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
ԸՆԴԱՄԵՆԸ	963	684	63	43	55	62	3	30	23
այդ թվում՝									
գերփոքր	543	378	32	26	35	36	1	21	14
փոքր	299	207	22	16	18	22	2	5	7
միջին	47	38	4	0	0	1	0	2	2
խոշոր	74	61	5	1	2	3	0	2	0
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն (բաժին A)									
Ընդամենը	21	7	4	1	2	4	0	2	1
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	9	2	2		1	1		2	1
փոքր՝ 6-50 աշխատողներ	10	4	2	1	1	2			
միջին՝ 51-100 աշխատողներ	1	1							
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	1					1			
Չկնորություն, ճկնարություն (բաժին B)									
Ընդամենը	1	1							
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	1	1							
Հանրագործական արդյունաբերություն (բաժին C)									
Ընդամենը	7	4	2	0	0	0	0	0	1
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	5	2	2						1
փոքր՝ 6-50 աշխատողներ	1	1							
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	1	1							
Մշակող արդյունաբերություն (բաժին D)									
Ընդամենը	111	73	12	9	7	7	0	2	1
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	53	31	5	5	5	4		2	1
փոքր՝ 6-50	51	36	6	4	2	3			

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի բաժնի անվանումը	Ընդամենը	Ստեփանակերտ	Ասկերան	Հադրութ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
աշխատողներ									
միջին՝ 51-100 աշխատողներ	3	3							
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	4	3	1						
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում(բաժին E)									
Ընդամենը	10	8	0	0	0	1	0	0	1
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	1	1							
փոքր՝ 6-50 աշխատողներ	2	1				1			
միջին՝ 51-100 աշխատողներ	2	1							1
խոշոր՝ 100-ից ավել աշխատողներ	5	5							
Շինարարություն (բաժին F)									
Ընդամենը	195	133	18	7	10	9	2	4	12
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	82	57	8	1	6	2		2	6
փոքր՝ 6-25 աշխատողներ	82	50	6	6	4	7	2	1	6
միջին՝ 26-50 աշխատողներ	11	9	1					1	
խոշոր՝ 50-ից ավել աշխատողներ	20	17	3						
Առևտուր,ավտոմեքենաների,կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում (բաժին G)									
Ընդամենը	391	281	15	17	29	35	0	11	3
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	273	189	9	14	22	26		10	3
փոքր՝ 6-15 աշխատողներ	92	68	5	3	7	8		1	
միջին՝ 16-30 աշխատողներ	18	16	1			1			
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	8	8							
Ծառայություններ (բաժիններ H+I+J+K+L+M+N+O)									
Ընդամենը	227	177	12	9	7	6	1	11	4
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	119	95	6	6	1	3	1	5	2
փոքր՝ 6-15 աշխատողներ	61	47	3	2	4	1	0	3	1
միջին՝ 16-30 աշխատողներ	12	8	2	0	0	0	0	1	1
խոշոր՝ 30-ից ավել աշխատողներ	35	27	1	1	2	2	0	2	0
Հյուրանոցներ և ռեստորաններ (բաժին H)									
Ընդամենը	47	36	2	4	1	0	0	3	1
այդ թվում՝									
գերփոքր՝ մինչև 5 աշխատողներ	31	22	2	4	1			1	1
փոքր՝ 6-15 աշխատողներ	11	10						1	

